# Ազգ
Azg

23 ՓԵՏՐՈՒԱՐ 2013 ՇԱԲԱԹ 25(5108)

ISSN: 1829-1651


## Րաֆֆին ասել են՝ ոչ

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Րաֆֆի Հովհաննիսյանին երեկ բավական ստվար բազմություն էր սպասում Ազատության հրապարակում՝ վերջապես պարզելու, թե ի՞նչ է խոսվել նախագահ Սարգսյանի եւ նրա հանդիպման ընթացքում: Եվ, առհասարակ, ի՞նչ քայլեր է առաջարկում նա վերջապես իր ընտրողին: Հանրահավաքի էմոցիոնալ եւ ռոմանտիկ շեշտադրումները մի կողմ թողնելով՝ միանգամից փոխանցենք տեղեկատվական մասը: Պատասխանելով նրա կողմնակիցների կողմից հաճախ հնչող հարցին, թե ինչո՞ւ գնաց հանդիպման Սերժ Սարգսյանի հետ, նա բացատրեց, թե ինքը բարդույթ չունի, վախ չունի սեփական հայրենիքում՝ հարգելու մարդուն եւ պահանջելու նրա քաղաքացու իրավունքը: Իր խոսքով՝ նա ասել է Սերժ Սարգսյանին. «Ճանաչեք ժողովրդի հաղթանակը», նրան ասել են՝ ոչ: Ասել է՝ շամպայն խմելու փոխարեն՝ նոր ընտրություն, ասել են՝ ոչ, ասել է՝ սահմանադրական ճգնաժամը հաղթահարելուն, նոր ընտրության պատրաստ չեք, պատժեք ուրեմն կեղծարարներին՝ մարզպետներին, նախարարներին, պատգամավորներին, բոլորին, ովքեր կեղծել են, վախ են սփռել: Իսկ որ նախագահը պատրաստ չէ նոր ընտրության եւ Արցախյան պատերազմի հերոսներից մեկը լինելով՝ ուժ չունի ժողովրդի հաղթանակը ճանաչելու, ուրեմն թող չնեղանա Րաֆֆուց, ինքն այլեւս ասելիք չունի իշխանություններին: Րաֆֆի Հովհաննիսյանի առաջարկներից մեկն էլ Ս. Սարգսյանին եղել է համամասնական կարգի անցնելն ու նոր խորհրդարան ձեւավորելը: Ու նորից պատասխանը եղել է՝ ոչ:

Ասենք, որ երեկվա հանրահավաքը նախորդ օրվա նման մարդաշատ էր, ելույթներով լի, հատկապես ներկայացված էին երիտասարդ ելույթ ունեցողներ, այդ թվում՝ «Մարիոթ-Արմենիայում» դիտորդներին պահանջ ներկայացրած աղջիկներից մեկը:

Րաֆֆի Հովհաննիսյանն իր ելույթն սկսեց «Բարեւ, Հայաստան» բառերով, իսկ մինչեւ օրվա օրակարգային սպասումը բավարարելը, այն է՝ ինչ պետք է անեն առաջիկայում, խոսեց հեռահար բաներից: Ասաց, որ հակազգային հայթուրքական արձանագրությունների ժամանակն անցել է, եւ 2015 թվականին կամ Հայաստանը հարաբերություններ կունենա Թուրքիայի հետ առանց նախապայմանների եւ արձանագրությունների, կամ Թուրքիային կներկայացնի իր ազգային պահանջները: Իսկ ԼՂՀ-ի ճանաչումն էլ արկածախնդրություն չէ, եւ Կոսովոն ու Արեւելյան Թիմորը ճանաչած աշխարհը պետք է ճանաչի ԼՂՀ-ն, այլ պետությունների հետ էլ՝ Ռուսաստանի, Ամերիկայի, մյուսների, ազգային շահը հաշվառած եւ արժանապատիվ հարաբերություններ պետք է կառուցենք:

Րաֆֆին ասում էր, թե զինվորը պետք է պահպանի սահմանը, երկրի տարածքային ամբողջականությունը, եւ նրան չպետք է հրամանատարն ուղղի ժողովրդի դեմ. «Ով զինվորին ուղղի ժողովրդի դեմ՝ գործ կունենա իմ ու ժողովրդի հետ, իսկ այն ոստիկանը, որ կատարելու է անօրեն հրաման, պատասխան է տալու»: Չնայած նշեց, որ մոտ ժամանակում հանդարտ, հետեւողական եւ սահմանադրական պայքար են տանելու: Նրա խոսքից հայտնի դարձավ, որ նրա կողմնակիցները, հանրահավաքի մասնակիցները պետք է երկարատեւ պայքարի պատրաստվեն. «Այս ժողովրդական շարժումը չի մարելու, մենք գնալու ենք դեպի հաղթանակ», ասաց:

Տես էջ 2




## Լարված վիճակ սահմաններում

*Նախարար Օհանյանը կոչ է արել Աբիեւին՝ երկուստեք զոհերից խուսափելու համար թուլացնել լարվածությունը*

Բրյուսելում՝ ՆԱՏՕ-ի կենտրոնակայանում կայացած հանդիպմանը ՀՀ պաշտպանության նախարար **Սեյրան Օհանյանը** Ադրբեջանի պաշտպանության նախարար Սաֆար Աբիեւին կոչ է արել՝ զերծ մնալ արկածախնդրությունից նաեւ ադրբեջանցի զինվորների կյանքի համար: Օհանյանը նաեւ կոչ է արել՝ թուլացնել լարվածությունը երկուստեք զոհերից խուսափելու համար:

Թեպետ նախարարը հաճախ է նման կոչով հանդես գալիս, սակայն այս հայտարարության պատճառն այն է, որ վերջին օրերին սահմանում լարվածությունը կրկնապատկվել է, հակառակորդը գրեթե ամեն օր ոչ միայն խախտում է հրադադարը, այլեւ կրակ բացում խաղաղ բնակչության վրա:

Փետրվարի 20-ի երեկոյան ժամը վեցից մինչեւ կեսգիշեր հակառակորդը տարբեր զինատեսակներով կրկին գնդակոծել է Տավուշի մարզի սահմանամերձ Այգեպար եւ Մովսես գյուղերը: Հակառակորդը դադարեցրել է կրակը միայն հայկական կողմի պատասխանից հետո:

«Առայժմ կենդանի ենք մնացել, նշանակում է՝ լավ ենք», «**Ազգ**»-ի հետ հեռախոսազրույցում ասաց Այգեպարի գյուղապետ **Անդրանիկ Այդինյանը**՝ հավելելով, որ գյուղացիներից շատերի վախը դեռ չի անցել, «սակայն դուխները տեղն է»:

«Գյուղը հերթական անգամ հակառակորդի գնդակոծությանն է ենթարկվել, շատերը նկուղում էին թաքնվել, շատ տների պատերն ու տանիքներն են վնասվել: Հիշեցնենք, որ փետրվարի 20-ին հակառակորդի կրակոցից գյուղացիներից մեկը հողամասում գործ անելիս վիրավորվել էր: Իսկ փետրվարի 13-ին կրկին Տավուշի մարզում հակառակորդի կրակից վիրավորվել էր 22-ամյա պայմանագրային զինծառայող Գեւորգ Մելիքբեկյանը:



Հ. Հ.

## Հատուկ... համար. «Ղարաբաղյան հակամարտությունը ռազմական լուծում ունենալ չի կարող»

«Կյանքի ողբերգական կորուստները Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ պատերազմում հիշեցնում են մեզ, որ ղարաբաղյան հակամարտությունը ռազմական լուծում ունենալ չի կարող», ադրբեջանական ANS հեռուստաընկերության թղթակցի՝ «Խոջալուի ցեղասպանության զոհերի հիշատակը հարգելու» մասին հարցին այսպես է պատասխանել ԱՄՆ պետքարտուղարության խոսնակ Վիկտորիա Նյուլանդը:

«Միայն տեւական եւ խաղաղ կարգավորումը կարող է բերել կայունության, բարգավաճման ու հաշտեցման տարածաշրջանում», նշել է Նյուլանդն ու ավելացրել, որ Միացյալ Նահանգները, որպես ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկիր, վճռական է շարունակելու աշխատել կողմերի հետ:

Ադրբեջանցի լրագրողի մեկ այլ հարցի առնչությամբ, որ վերաբերում էր Սպիտակ տան կայքէջում զետեղված «Խոջալուի զոհերի հիշատակը հարգելու» մասին միջնորդությանը ընթացք տալուն, Նյուլանդը արձագանքել է՝ լրագրողին ուղղորդելով դիմել Սպիտակ տուն:

Հարեւան երկրի լրագրողը հետաքրքրվել է նաեւ հայաստանյան ընտրություններով ու այդ առնչությամբ որեւէ նորությամբ: Նյուլանդը հիշեցրել է իր նախորդ երկու ճեպազրույցներում արված հայտարարությունները հայաստանյան ընտրությունների առնչությամբ:

Տես էջ 2

## La Repubblica. «Պապը հեռացավ արվամոլների պատճառով»

**Եվրոպական լրատվամիջոցները Վատիկանից մեկնաբանություններ են ակնկալում La Repubblica թերթի այն հրապարակման կապակցությամբ, ըստ որի Հռոմի պապ Բենեդիկտոս 16-րդը գահից հրաժարվել է արվամոլական սկանդալի պատճառով: Թերթի հաղորդումների համաձայն, Վատիկանում բացահայտվել է արվամոլ բարձրաստիճան հոգեւորականների ցանց: Ոմանք նաեւ մեղադրվում են Վատիկանի ունեցվածքի հափշտակման մեջ:**

**Առայժմ պաշտոնավարող Բենեդիկտոս 16-րդի ներկայացուցիչը հրաժարվել է հաստատել կամ հերքել իտալական թերթի հրապարակած տեղեկությունները: Ի դեպ, թերթը նշում է, որ պապը պաշտոնաթողության որոշումն ընդունել է 2012 թ. դեկտեմբերի 17-ին: Այդ օրը նա հաշվետվություն էր ստացել երեք կարդինալներից, որոնք զբաղվում էին այսպես կոչված «Վատիլիքսի» գործով: Ամեն ինչ սկսվել էր անցյալ տարվա մայիսին, երբ պապի սենեկապան Պաոլո Գաբրիելեն գողացել էր Վատիկանի գաղտնի փաստաթղթեր եւ դրանք հանձնել էր լրագրողներին:**

**Երեք կարդինալների հանձնաժողովի կազմում էին Իսպանիայի ներկայացուցիչ Խուլիան Խերանսը (ղեկավար), Պալերմոյի նախկին արքեպիսկոպոս Սալվատորե դի Ջորջին եւ Սլովակիայի կարդինալ Յոզեֆ Տոմկոն: Պապին ներկայացված գործը երկհատոր էր եւ ընդհանուր առմամբ 300 էջ ունի: Թերթը պնդում է, որ այն փոխանցվելու է պապի իրավահաջորդին: Գործը տեղեկություններ է պարունակում Վատիկանում հոգեւորականների ինչ-որ ոչ պաշտոնական խմբավորումների ձեւավորման մասին: Դրանց որոշ անդամներ միավորվել են ըստ ոչ ավանդական սեռական կողմնորոշման:**

**Սպասվում է, որ պապը Վատիկանից հեռանալու վերաբերյալ պաշտոնական հայտարարություն կանի փետրվարի 28-ին: Նոր պապի ընտրությունը տեղի կունենա մարտին նախատեսված կարդինալների ժողովում:**

## Կոմանդոս. «Ասել են՝ քանի՞ գլուխ ունեք, որ ազատել եք Շուշին»

Արդեն երրորդ օրն է՝ բանավեճ է ծավալվել Արցախյան ազատամարտի հերոս, գեներալ-մայոր Արկադի Տեր-Թադեւոսյանի եւ «Ղարաբաղ» կոմիտեի նախկին անդամ Աշոտ Մանուչարյանի միջեւ: «**Ազգ**»-ն այդ հեռակա, ասուլիսային բանավեճին անդրադարձել է նախորդ համարներում: Հիշեցնենք, որ Արցախյան ազատամարտի 25-ամյակին Կոմանդոսը հայտարարել էր, որ Լեւոն Տեր-Պետրոսյանը դեմ է եղել տարածքներ ազատագրելուն, նա ընդամենը փորձում էր հասնել խարխուլ խաղաղության՝ ձգտելով պահպանել Արցախն Ադրբեջանի կազմում:

Աշոտ Մանուչարյանի գնահատմամբ՝ Կոմանդոսին քայքայիչ ուժերն են օգտագործում, որպեսզի նա նման հայտարարություն անի:

Թեպետ «**Ազգ**»-ի հետ զրույցում Կոմանդոսը հայտարարել էր, որ փաստաթղթեր կներկայացնի եւ կբացահայտի պատերազմի մութ կողմերը, սակայն երեկ կայացած ասուլիսի ժամանակ որեւէ նոր բացահայտում նա չարեց:

«Նախորդ իշխանությունը դեմ էր խոշոր օպերացիաների իրականացմանը: Նրանք ամեն կերպ խանգարում էին մեզ: Նրանք պետք է խոստովանեն իրենց սխալները: Ես քաղաքական հարցեր չեմ բարձրացնում, ես քաղաքական գործիչ չեմ, ես զինվորական եմ, նրանց մոտ դա քաղաքականություն էր, ինչո՞ւ են հիմա հրաժարվում դրանից: Թերթը կա, տպագրված է, որտեղ նրանք ասել են, թե քանի՞ գլուխ ունեք, որ ազատել եք Շուշին», ասաց Կոմանդոսը:

«Ես կրկին հաստատում եմ, որ 1992-ին Լեւոն Տեր-Պետրոսյանն ու ներքին գործերի նախկին նախարար Աշոտ Մանուչարյանը դեմ են եղել Խոջալուի եւ Շուշիի ազատագրմանը: Եվ մինչեւ Խոջալուն եւ Խոջալուից հետո էլ են ցանկացել կասեցնել գործողությունները: Պատերազմական գործողություններ էին գնում, օպերացիան սկսվեց գիշերը ժամը 4-ին, ժամը 7-ին Տեր-Պետրոսյանը պահանջում էր, որ դադարեցվեն պատերազմական գործողությունները: Նախորդ իշխանությունները փորձում էին հարցը լուծել խաղաղ ճանապարհով, փորձում էին Ղարաբաղը թողնել Ադրբեջանի տարածքում», ասաց Կոմանդոսը՝ հավելելով, որ սրանք ընդամենը մի քանի փաստեր են, ու եթե նախորդ իշխանությունները շատ են ցանկանում, ապա ինքը այլ մանրամասնություններ էլ կարող է հաղորդել: «Это еще цветочки», եզրափակեց Կոմանդոսը:

Հ. Հ.

# Չեխիան մտել է «Ղարաբաղի համար պատերազմի մեջ». Խավիարային դիվանագիտությունը հաղթում է

ՊՐԱՀԱ- Չեխական «Լիդովե Նովինի» թերթն իր այսօրվա համարում այսպիսի վերնագրով հոդվածաշարի տակ անդրադարձել է Խոջալուի ողբերգության 21-ամյակին եւ մի քանի հոդվածներով անդրադարձել թեմային՝ ներկայացնելով չեխ, հայ եւ ադրբեջանական տեսակետները: Այս թղթածրարը կազմել է պատերազմական գոտիներում աշխատանքի մեծ փորձ ունեցող, լրագրող **Պետրա Պրոխազկովան**, որը զրուցել է նաեւ Չեխիայում Հայաստանի դեսպան Տիգրան Սեյրանյանի, սենատոր Յարոմիր Շտետինայի հետ: Վերջերս Չեխիայի խորհրդարանի Պատգամավորների պալատի արտաքին հարաբերությունների կոմիտեի ընդունած Խոջալուի ողբերգության բանաձեւի հեղինակ, սոցիալ-դեմոկրատ պատգամավոր եւ չեխ-ադրբեջանական բարեկամության խմբի անդամ Յան Համաչեկը խուսափել է մեկնաբանել իրենց ընդունած որոշումը, բայց այդպես էլ ոչ մի մեկնաբանություն չի տվել: Իսկ սենատոր **Յարոմիր Շտետինան**, պատասխանելով թղթակցի հարցերին, ասել է, թե Խոջալուի հայկական բնակչությանը հնարավոր է, որ ոչ թե հայերն են սպանել, այլ ադրբեջանական առանձին զինմիավորումներ: Նրա կարծիքով՝ կոմիտեն իրավունք չուներ բռնելու պատերազմող կողմերից մեկի կողմը եւ նման որոշում ընդունել: Սենատորի կարծիքով, եթե պատգամավորները խնդրին չեն տիրապետում, առնվազն պետք է լռեն: Նա առաջարկում է, որ ստեղծված իրավիճակում կոմիտեն իր ընդունած որոշումը պետք է ուժը կորցրած ճանաչի: Նման կարծիք է հայտնել նաեւ Հայաստանի դեսպանը:


SVĚT | TÉMA — LIDOVÉ NOVINY

Masakr v Chodžali před 21 lety využívá Ázerbájdžán k tlaku na Arménii. Čeští poslanci mu pomáhají

Česko vstoupilo do „války o Karabach“

Poslanci zahraničního výboru české Poslanecké sněmovny přijali usnesení, kterým nešťastně vstoupili do komplikovaného konfliktu o Náhorní Karabach. Jasně se postavili za jednu z nesvářených stran. Podpořili Ázerbájdžán a odsoudili Arménii.

PETRA PROCHÁZKOVÁ



Թղթակցի այն հարցին, թե արդյոք այս որոշումը դիվանագիտական կոռուպցիայի արդյունք է, լինի դա ճամփորդությունների կամ թանկարժեք նվերների ձեւով, սենատորը նշել է, որ, իհարկե, որոշ չեխ պատգամավորներ ադրբեջանական կողմի հետ հատուկ հարաբերություններ ունեն, իսկ Համաչեկը նույնիսկ Ալիեւից ստացել է պարգեւատրում: Մի այլ նյութում՝ «Խավիարային դիվանագիտությունը հաղթում է, Ադրբեջանը կաշառում է քաղաքական գործիչներին», հենվելով Եվրոպական անվտանգության ինստիտուտի ESI հրապարակած տվյալների վրա՝ գրվում է, որ Չեխիայի խորհրդարանի շատ անդամներ երկարատեւ հանգստի են մեկնում Կասպից ծովի ափ, որտեղից դատարկաձեռն չեն վերադառնում: Միշտ բերում են իրենց հետ խավիար եւ ոսկյա զարդեր: Նշվում է նաեւ, որ «խավիարային դիվանագիտությունը» սկսվել է 2005 թվականից՝ Բաքու-Թբիլիսի-Ջեյհան գազատարի շահագործման ծրագրից հետո: Օրինակ, Եվրոխորհրդի այն պատգամավորները, որոնք ընդգրկված են Բաքվի հետ բարեկամության խմբում, տարեկան առնվազն չորս անգամ խավիարի կեսկիլոգրամանոց փաթեթներ են ստանում: Իսկ մեկ կիլոգրամ խավիարն արժե 35 հազար կրոն՝ մոտ 1400 եվրո: Ավելին, Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովում վերջերս, երբ քվեարկության է դրվել Ադրբեջանում մարդու իրավունքների խախտումը դատապարտող բանաձեւ, միակ պատգամավորը, որը դեմ է քվեարկել բանաձեւին, եղել է Չեխիայի պատվիրակությունից, որի վրա չի ազդել նույնիսկ չեխական հեղինակավոր «Մարդը կարիքի մեջ» կազմակերպության նամակը:

Թղթածրարում բերվում է նաեւ Թոմաս դե Վալի գրքից Խոջալուին նվիրված մի հատված, որն, իհարկե, ներկայացնում է ադրբեջանական տեսակետը: Ներկայացվում են նաեւ Ղարաբաղյան պատերազմի ժամանակագրությունը եւ զոհվածների թվերը, որոնք վերցված են ադրբեջանական աղբյուրներից:

**ՀԱԿՈԲ ԱՍԱՏՐՅԱՆ**
**Պրահա**
*«ՕՐԵՐ» ԵՎՐՈՊԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ*

# Բաքուխանյանը կես միլիոն հայի անվանեց «աղանդավոր, համասեռամոլ, անգիտակից ու թշնամի»

**Դեռեւս քաղաքական կուլտուրա, բանավիճելու մշակույթ չունեցող մեր քաղաքական գործիչները, կամ, ավելի ճիշտ, քաղաքական գործիչ ներկայացողներն աչքի ընկնելու համար հաճախ են դիմում վիրավորական արտահայտությունների, վիրավորում, ասենք, հակառակ թեւի քաղաքական գործչին, նրա գաղափարները: Արեւմուտքում անհամաձայնությունն արտահայտում են ոչ թե վիրավորելով, այլ քննադատելով այս կամ քաղաքական գործչի ելույթը, ծրագիրը կամ գործունեությունը, մեզ մոտ «զահլա» չունենալու պատճառով միանգամից անցնում են գռեհի, օրինակ՝ ասում են «դիոլ», «գյոռնափշիկ», «շիզոֆրենիկ» եւ այլն:**

**Հայկ Բաբուխանյանն էլ, որ ՀՀԿ-ի ցուցակով այսօր մանդատ ունի եւ պատգամավոր է, բացառություն չէ: Որպեսզի առավել հասուն եւ գրագետ գործչի գոնե տպավորություն թողներ, Բաբուխանյանը կարող էր քննադատել Րաֆֆի Հովհաննիսյանին, նրա գաղափարները, արարքները, սակայն նա ընտրեց առավել հեշտ տարբերակ՝ նրան անվանել «Քաջ Նազար», այս կերպ հերթական անգամ գցելով ոչ միայն իր, այլեւ իր կուսակցության եւ կուսակցության առաջնորդի անունը: Ի վերջո նա ներկայանում է որպես ՀՀԿ պատգամավոր ու պաշտպանում ՀՀԿ-ի թեկնածու, նախագահ Սերժ Սարգսյանի շահերը:**

**Մենք չէինք անդրադառնա Բաբուխանյանի ասուլիսին, որին ներկա չենք էլ գտնվել եւ միայն կայքերի միջոցով ենք ծանոթացել, եթե Բաբուխանյանը՝ մոռանալով բարոյականության եւ արժեքների մասին, չվիրավորեր նաեւ Հայաստանի ավելի քան 537.000 քաղաքացու, որոնց միակ մեղքն այն է, որ փետրվարի 18-ի ընտրություններին քվեարկել են ոչ թե Սերժ Սարգսյանի, այլ Րաֆֆի Հովհաննիսյանի օգտին:**

**«Հայաստանում մարդկանց մի մաս կա, որ ցանկանում են՝ Հայաստանը գնա Վրաստանի ճանապարհով, դուրս մղի ռուսական բազան, փոխարենը՝ բերի ամերիկացիներին, թուրքերին, հանձնի Արցախը Ադրբեջանին: Ես դա համարում եմ գիտակցաբար թշնամություն անողներ, եւ նրանք, բնականաբար, իրենց ձայնը տվել են Րաֆֆիին, որովհետեւ իր ծրագիրը հենց դա էր: Կան մարդիկ, ովքեր ցանկանում են, որ Հայաստանում չլինի ազգային ինքնություն, տարածվեն գեյ ակումբներ, շքերթներ, որպեսզի ավանդական ընտանիքներ գոյություն չունենան, եւ նրանք էլ են տեսնում Րաֆֆի Հովհաննիսյանի մեջ իրենց առաջնորդին: Կա մարդկանց երրորդ շերտ, որը դառնություն ունի Հայաստանի անարդարությունից, գործազուրկ է, եւ նա անգիտակցաբար իր ձայնը տալիս է ընդդեմ իշխանության: Նրանք, ովքեր ձայն են տվել Րաֆֆի Հովհաննիսյանին, չե՞ն գիտակցել, թե ինչպես են վտանգել Հայաստանը: Լավագույն բանը, որ Րաֆֆին կարող է անել, իր մեջ ընկած Քաջ Նազարի բախտը ճիշտ օգտագործելն է, եւ մի' մոռացեք, թե ոնց նա գնաց Ծոմակ կոչեցյալի որջը, որ աջակցի նրան», հայտարարել է Բաբուխանյանը՝ հավելելով, որ Րաֆֆի Հովհաննիսյանին ձայն տվել են անգիտակից մարդիկ, աղանդավորներն ու համասեռամոլները»: Թե ո՞վ է Բաբուխանյանին իրավունք տվել վիրավորել կես միլիոն մարդու, հայտնի չէ, որեւէ խոսք ասել իր անձի հասցեին՝ անիմաստ է, ի վերջո նա այն է, ինչ կա՝ այսօր կողմ է, վաղը՝ դեմ, ու երեկ իր բոլոր բնորոշիչներով, անցյալով ու ներկայով, իր ապրածով ու «գաղափարախոսությամբ» Բաբուխանյանը Facebook-ում թիվ մեկ թիրախն էր: Հույս ունեմ՝ գոնե դրանց մի մասը նա կարդացել է: Ինչ մնում է լրատվամիջոցներին, ճիշտ կլինի չլուսաբանել այս անձնավորության ասուլիսները, որպեսզի մեկ-երկու միկրոֆոն տեսնելիս, աստղային հիվանդությամբ տարված՝ նա չմոռանա էթիկայի ու ժողովրդավարության մասին:**

**ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՆՐԱՀԱՎԱՔ

# Րաֆֆուն ասել են՝ ոչ

*1-ին էջից*

**Եվ մոտակա օրերի պայքարի ուղին ու արվող քայլերը նշեց. գնալու են մարդկանց հետ հանդիպելու Աշտարակում, Վանաձորում, Սպիտակում, Գյումրիում, իսկ կիրակի օրը վերադառնալու են Երեւան, Ազատության հրապարակ եւ ժամը 3-ին էլի հանրահավաք են անելու: Քաղաքապետարանը «Ժառանգության» փոխնախագահ Արմեն Մարտիրոսյանի իրազեկումը երեք օր հանրահավաք անցկացնելու մասին, այդ թվում՝ կիրակի օրը, ի գիտություն չէր ընդունել: Ռ. Հովհաննիսյանը տեղում առաջարկեց քաղաքապետարանին՝ ի գիտություն ընդունել:**

**«Միասին պետք է կերտենք մեր ապագան, պատրա՞ստ եք ինձ օգնելու», հարցրեց նա հանրահավաքավորին: Հանրահավաքավորը պատրաստ էր: Եվ ապա հանրահավաքավորին Ռ. Հովհաննիսյանն ուղղորդեց երթի՝ Երեւանի փողոցներում «Բարեւի հեղափոխությունն» ավետելու: Երեւանի փոխոստիկանապետ Վալերի Օսիպյանը մի պահ կասեցրեց Րաֆֆուն, ասելով, որ հասարակական կարգ են խախտում, դա Աբովյան փողոցում «Մարկո Պոլո» սրճարանի մոտ էր: Ռ. Հովհաննիսյանն էլ հրահանգեց իր կողմնակիցներին մայթերով շարժվել, ու նրանք գնացին տարածելու «Բարեւի հեղափոխությունը» Մաշտոցի պողոտայով եւ հետո կրկին վերադառնալու Ազատության հրապարակ:**

**Այս հանրահավաքին, բացի «Ժառանգության» նախկին ու ներկա պատգամավորներից, մասնակցեցին եւ ելույթներ ունեցան Ռուբեն Հախվերդյանը, ժամանակին անավարտ հեղափոխություն սկսած ու չավարտած ոչ անհայտ Արկադի Վարդանյանը, նախագահի թեկնածու Անդրիաս Ղուկասյանը, Կարապետ Ռուբինյանն ու այլք: Հայտարարվեց, որ ՀՅԴ-ն միանում է Րաֆֆու պայքարին:**

**Անդրիաս Ղուկասյանը շնորհավորեց Րաֆֆուն՝ ասելով, որ նա արեց այն, ինչ տարիներ շարունակ չէր կարողանում անել ընդդիմությունը, եւ անգամ ասաց, թե ձեռք բերածն արժե պահպանել կյանքի գնով:**

**Նիկոլ Փաշինյանը մի լավ տաքացրեց հանրահավաքն իր հռետորաբանությամբ՝ նշելով Հայաստանում հաստատված նոր քաղաքական իրավիճակի մասին, երբ կա մի բեւեռ՝ իշխանությունը, եւ երկրորդ բեւեռ՝ ժողովուրդն ու նրան գլխավորող Րաֆֆի Հովհաննիսյանը: Նա որպես պայքարի մինիմում ծրագիր նշեց՝ ժողովուրդը չպետք է պարտվի, եւ պետք է բացառվի ուժի կիրառումը ժողովրդի հանդեպ, իսկ մաքսիմում ծրագիրը՝ հասնել նրան, որ ժողովրդի ընտրությունը տեղ հասնի եւ Րաֆֆին հռչակվի դե յուրե նախագահ:**

**«Ժառանգության» փոխնախագահ Ռուբեն Հակոբյանի խոսքում մի այսպիսի պահ կար՝ ուղղված իշխանություններին, թե այլեւս «որեւէ կերպ, անգամ դիպուկահարներով չեք կարող կանգնեցնել մեր ընթացքը»:**

**Իսկ ՀՅԴ գերագույն մարմնի ներկայացուցիչ Արմեն Ռուստամյանը, նշելով, որ հրապարակում այս քանի օրը սպասում էին Դաշնակցությանը, դիմեց. «Մենք այստեղ ենք, մենք եկել ենք, Դաշնակցությունը ձեր կողքին է»: Փետրվարի 18-ի ընտրություններում Րաֆֆու ստացած քվեի վերաբերյալ էլ ասաց. «Սա ընդվզում էր անհուսության, անարդարության, արտագաղթի դեմ»:**

**Առայժմ բավարարվենք տեղեկատվական նյութով, մինչեւ մոտակա երեք օրը Րաֆֆին ու իր կողմնակիցները հրապարակային միջոցառումներում ավելի կպարզեն իրենց օրակարգը, իսկ արդեն շաբաթվա սկզբին կարելի է նաեւ վերլուծել ստեղծված քաղաքական իրավիճակը:**

# Հատուկ... համար. «Ղարաբաղյան...»

*1-ին էջից*

Հիշեցնենք, որ փետրվարի 19-ին Նյուլանդը հերթական ճեպազրույցում նշել էր, որ ԱՄՆ-ը աջակցում է ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ի նախնական եզրակացություններին առ այն, որ ընտրություններն ընդհանուր առմամբ լավ էին կազմակերպված եւ բնութագրվել են հիմնարար ազատությունների՝ ներառյալ հավաքների եւ խոսքի ազատության հանդեպ հարգանքով: Դրա հետ մեկտեղ Նյուլանդը նշել էր միջազգային դիտորդների այն մտահոգությունները, որոնք կապված էին վարչական ռեսուրսի օգտագործման, որոշ կողմնակալության եւ այլ խախտումների հետ, ընդ որում՝ դրանք կարիք ունեն հետաքննության:

Արդեն փետրվարի 20-ին, կրկին անդրադառնալով Հայաստանի նախագահի ընտրություններին, ԱՄՆ պետքարտուղարության խոսնակը նախ շնորհավորել էր հայ ժողովրդին ընտրությունների կապակցությամբ, ապա նաեւ ավելացրել, որ հայաստանյան մամուլի առնչությամբ ԵԱՀԿ ԺՀՄԻԳ հնչեցրած որակումն առ այն, որ մամուլը կատարել է իր պարտականությունը՝ ապահովելով հավասարակշռված լուսաբանում, ընդ որում՝ ազատ եթերի օգտագործմամբ:

«Միացյալ Նահանգները շարունակելու է դիտարկել միջազգային եւ տեղական դիտորդների բացահայտումները, ինչպես նաեւ ընտրական բողոքների քննությունները արդեն հետընտրական շրջանում», եզրափակել էր Վիկտորիա Նյուլանդը:

**Վ. Պ.**

## Ցավակցություն

ՌԱԿ Հանրապետական վարչությունը խորապես ցավակցում է իր անդամներից Մեսրոպ Հարությունյանին՝ սիրելի մոր՝

**Մայրանուշ Արսենյանի**

մահվան կապակցությամբ:

Հոգեհանգիստը՝ այսօր, ժամը 18:00-ից, Բաշինջաղյան I-ին նրբանցք, 5-րդ շենք, բն. 36 հասցեում:

Թաղումը՝ վաղը, փետրվարի 24-ին, ժամը 12:00-ին, նույն հասցեից:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960
060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Անցուդարձ

Հայաստանում նախագահական ընտրություններից հետո մի տեսակ ավանդույթ է դարձել, որ պարտված թեկնածուն հայտարարում է իր հաղթանակի մասին: Ընդ որում, հետաքրքրական է, որ ե՛ւ 2008-ին, ե՛ւ հիմա, պարտված թեկնածուները խոսում են նույն՝ 80 տոկոս ձայն ստանալու մասին: Եվ որ ամենակարեւորն է, այս ամենն ուղեկցվում է ժողովրդի անունից խոսելով, նրանով հիանալով՝ բնականաբար, նկատի ունենալով միայն իրենց ընտրողներին:

Պարտված թեկնածուի կողմնակիցների համար հաղթած թեկնածուին ընտրողներ պարզապես գոյություն չունեն, իսկ եթե կան էլ, ապա «կաշառված» են, «վախեցած» են կամ էլ «իշխանության կողմից» են: Այսինքն, այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ հաղթող թեկնածուն ընդհանրապես ընտրազանգված չունի, եւ նրան ընտրողները նույն ժողովուրդը չեն ներկայացնում: Եվ պիտակավորված չլինելու եւ ամբոխավարական հարձակումների չենթարկվելու համար գործող նախագահին ընտրողները խուսափում են ասել, թե ում են ընտրել: Մինչդեռ իրականում Սերժ Սարգսյանին ընտրողները ունեն պատճառներ նրան ընտրելու, եւ այդ պատճառները, իմ կարծիքով, ավելի հիմնավոր են, քան նրա մրցակցի օգտին քվեարկողների ընտրությունը:

# Սոցիալական ծրագրերը պետք է արտացոլվեին ընտրությունների արդյունքի վրա

*Անհնար է գողանալ հարյուրհազարավոր ձայներ եւ ստանալ միջազգային դիտորդների դրական գնահատականը*




Անցած 5 տարիների ընթացքում գործող նախագահի ձեւավորած կառավարությունը կատարել է քայլեր, որոնք ընդգրկված են եղել Սերժ Սարգսյանի նախընտրական ծրագրում եւ իրենց բնույթով եղել են ոչ ստանդարտ եւ աննախադեպ Հայաստանի անկախության ամբողջ ընթացքում: Մասնավորապես, խոսքը վերաբերում է պետության մասնակցությամբ սոցիալական ուղղվածություն ունեցող ծրագրերին: Ի՞նչ քայլերի մասին է խոսքը, որ արվել են Հայաստանի կառավարության կողմից վերջին տարիներին:

Պետական բյուջեից մոտ 25 մլրդ դրամ հատկացվեց 2011-ին եւ 2012-ին բանկերի կողմից տրվող գյուղատնտեսական վարկերի սուբսիդավորման համար: Պետությունը իր վրա վերցրեց 14 տոկոս գյուղվարկերի 4 տոկոսի ֆինանսավորումը, իսկ լեռնային եւ սահմանային գյուղերում՝ 6 տոկոսի ֆինանսավորումը: Այդ երկու տարում այդ վարկերից օգտվեցին 37 հազար գյուղացիական տնտեսություններ: Սրան էլ ավելացնենք պետության կողմից վառելիքի եւ պարարտանյութերի գումարի մի մասն իր վրա վերցնելը: Այսինքն, գյուղացիների այդ ընտանիքներն ունեցել են լուրջ պատճառներ ձայն տալու գործող նախագահին եւ նրանց զգալի մասը այդպես էլ արել է:

Կառավարության մյուս խոշոր սոցիալական ծրագիրը սոցփաթեթի ներդրումն է պետական աշխատողների համար, որից անցած տարի օգտվեցին 120 հազար մարդ՝ իրենց ընտանիքի անդամներով: Անկախ այն բանից, որ նոր ներդրված համակարգն ունեցավ բազմաթիվ թերություններ, այնուամենայնիվ, մարդիկ տեսան եւ զգացին, որ պետությունն անմիջականորեն մասնակցում է իրենց առողջության, հանգստի անցկացման, վարկերի եւ ուսման վճարների մարման ծախսերին: Եթե ավելացնենք, որ 2013-ին սոցփաթեթից օգտվող 120 հազարին ավելանալու է եւս 30 հազարը, իսկ բյուջեից այդ նպատակով հատկացվելու է 21,5 մլրդ դրամ, ապա պարզ է դառնում, որ այս քայլով գործող իշխանությունը դարձյալ հող է ստեղծում հարյուրհազարավորներին իր օգտին քվեարկելու համար:

Երիտասարդ ընտանիքների համար հիփոթեքային վարկերի տոկոսների մի մասի պետության կողմից ֆինանսավորումը, համալսարանականների համար մատչելի գներով բնակարանային համալիրի կառուցումը, նույն ձեւով մանկավարժների, լրագրողների, մարզիկների համար կառուցվող բնակելիները, սոցիալական շենքերի կառուցումը, արտերկրի լավագույն բուհերում ուսանելու մեկնողների ծախսերի ֆինանսավորումը եւ բառացիորեն վերջերս ուսանողական վարկերի տոկոսադրույքի մի մասի սուբսիդավորումը այն կոնկրետ քայլերն են, որ պետք է նպաստեն տվյալ իշխանության վարկանիշի բարձրացմանը եւ դրա արտացոլմանը ընտրությունների ժամանակ: Չպետք է մոռանալ, որ այս ծրագրերի հետեւում եւս միլիարդավոր դրամներ են եւ հազարավոր մարդիկ:

Կառավարության իրագործած խոշորագույն մեկ այլ ծրագիր էր աղետի գոտում բնակարանաշինությունը, որին հատկացվեց 85 մլրդ դրամ, եւ վերջին երեք տարիներին մոտ 6 հազար ընտանիքներ բնակարաններ ստացան՝ 20 տարուց ավելի տնակներում ապրելուց հետո: Սա կարո՞ղ էր լրացուցիչ ձայներ բերել գործող նախագահին: Բնականաբար կարող էր: Այլ հարց է, որ օբյեկտիվ՝ սոցիալական, քաղաքական, կենցաղային, ինչպես նաեւ սուբյեկտիվ՝ հոգեբանական պատճառներով աղետի գոտում դժգոհությունները մեծ են գործող իշխանություններից, եւ ընդհանուր առմամբ գործող նախագահն այստեղ պարտվեց:

Այստեղ չենք ներկայացնում կառավարության քայլերը բիզնես միջավայրի բարելավման, հարկային վարչարարության, պետական ծառայություններն ավելի հասանելի դարձնելու եւ այլ քայլերի մասին, քանի որ այդ ամենը ներկայացրել ենք, մատնանշելով նաեւ այդ գործընթացների թերությունները: Չենք ասում նաեւ, որ դրանով իշխանությունները «լավություն են արել» ժողովրդին: Նրանք կատարել են իրենց պարտականությունը, ինչը պետք է պարզապես տեսնել, ճիշտ այնպես՝ ինչպես եւ չկատարված պարտականությունները: Այնուամենայնիվ, կատարվածի համար պետք է գնահատել եւ այդ գնահատականը տալ ընտրությունների ժամանակ: Ինչն էլ ընդհանուր առմամբ տեղի է ունեցել:

Մնում է միայն ավելացնել, որ բացի սոցիալական մոտիվացիա ունեցողներից, ինչպես ամեն մի թեկնածուի, այնպես էլ Սերժ Սարգսյանին, ընտրել են նրա կողմնակիցները, կուսակիցները եւ պարզապես մարդիկ, որոնք նրա թիմում չեն, չեն օգտվել վերոնշյալ սոցիալական ծրագրերից, բայց իրենց աշխարհայացքով նախագահի թեկնածու առաջադրված 7 թեկնածուներից նախընտրել են հենց գործող նախագահին: Այսինքն, չի կարելի մարդկանց հիմարացնել եւ ասել, թե պարտված թեկնածուն ստացել է 80 տոկոս ձայն ու այդ ձայները նրանից գողացել են: Հնարավոր չէ գողանալ հարյուրհազարավոր ձայներ այնպես, որ բոլոր միջազգային դիտորդները դրական գնահատական տան ընտրություններին:

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

# Անհրաժեշտ է նոր կոալիցիա

Թե ինչպես անցան ընտրությունները, ակնհայտ է բոլորին: Ինչպես ասում են միջազգային դիտորդները՝ դրանք մեկ քայլ առաջ էին: Մինչդեռ իրական ժողովրդավարությունը մեզանից դեռ շատ հեռու է: Ընտրությունների արդյունքները անցած հինգ տարիներին իշխանությունների վարած քաղաքականության գնահատականն էին: Ասել, թե երկրորդ տեղը զբաղեցրած գործիչը եթե հավաքում է քվեների 40 տոկոսը, դա ՀՀ-ում ժողովրդավարության արդյունք է, կնշանակի չտեսնել կամ չտեսնելու տալ հասարակության մեջ տեղի ունեցող իրական գործընթացները: Թերեւս Րաֆֆի Հովհաննիսյանը ավելի քիչ ձայների է տիրապետում, քան փաստացի ստացել է, սակայն այստեղ ամենեւին նրա անձի խնդիրը չէ, այլ այն, որ խաղաղախտական մի կողմից փոփոխությունների նկատմամբ կարծրացած համակարգն է, մյուս կողմից՝ օր առաջ արմատական փոփոխություններ ցանկացող ժողովուրդը: Արմատական փոփոխություններ՝ ոչ թե տարիներ ձգվող բարեփոխումներ; Փոփոխություններ, որոնց մասին ողջ քարոզարշավի ընթացքում խոսում էր նաեւ Սերժ Սարգսյանը՝ ներառելով դրանք «Դեպի ապահով Հայաստան» կարգախոսում: Այդ փոփոխություններն անհնարին է իրականացնել հեղինակազրկված կադրերով, Հայաստանի տնտեսությունը քամող օլիգարխներով եւ միայն ՀՀԿ ռեսուրսներով: Անհրաժեշտ է քաղաքական հարթակից հեռացնել կամ գոնե երկրորդ պլան մղել այդ հնոտի, հեղինակազրկված կադրերին ու օլիգարխներին՝ փոփոխություններ իրականացնելով հանրային կյանքի բոլոր ոլորտներում: Իշխանության նկատմամբ վստահությունը վերականգնելու համար անհրաժեշտ է փոխել անկարող եւ կոռումպացված որոշ նախարարների եւ շատ չինովնիկների: Փոփոխություններ իրականացնել հատկապես հարկային, մաքսային, դատական եւ այլ ոլորտներում: ԱԺ-ին վերադարձնել իր քաղաքական գործառույթը՝ մաքրելով անգործունյա պատգամավորներից: Այս եւ մնացած շատ կարեւոր հարցերի շուրջը անհրաժեշտ է գալ համաձայնության եւ երկիրը դուրս բերել բարոյահոգեբանական, քաղաքական, տնտեսական եւ մշակութային ճգնաժամից:

Հետընտրական գործընթացները նոր կոալիցիա կազմավորելու հնարավորություն են ստեղծել ավելի բարեկիրթ եւ չհեղինակազրկված ուժերի հետ (նկատի ունեմ «Ժառանգությանն» ու Րաֆֆի Հովհաննիսյանին): Այդ կոալիցիան կստեղծի նոր հնարավորություն իրականացնելու համար այդքան սպասված փոփոխությունները, որոնք տեսանելի պետք է լինեն ՀՀ յուրաքանչյուր քաղաքացու:

Հուսով եմ, որ Սերժ Սարգսյանի եւ Հայաստանի հանրապետական կուսակցության քաղաքական փորձառությունն ու ապահով Հայաստան տեսնելու նրանց ցանկությունը՝ մի կողմից, եւ Րաֆֆի Հովհաննիսյանի ու «Ժառանգության» անկեղծ եւ արտացոլ մոտեցումները՝ մյուս կողմից, կօգնեն ստեղծելու նոր քաղաքական կոալիցիա:

**ՎԱՀՐԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ**
**ՀՀԿ խորհրդի անդամ**

ԻՐԱՎԻՃԱԿ

# Սահմանն ու քաղաքականությունը

Իրականում մեր երկիրը, անկախ նրանից, որ «80 տոկոս» հավաքած նախագահի թեկնածուն էլի Ազատության հրապարակում է, ոչ թե Բաղրամյան 26-ում, փոխվել է: Օրինակ՝ հինգ տարի առաջ անհնարին էր, որ «հաղթած թեկնածուն», թեկուզ «հարյուրհազարավոր» հանրահավաքավորների գլուխն անցած, կտրի անցնի Ազատության հրապարակ-Բաղրամյան 26 ճանապարհն ու հանդիպի գործող նախագահի հետ, տեղի ունենա ձեռքսեղմում, նախկին մրցակիցները ժպտան միմյանց... Նշանակո՞ւմ է արդյոք սա, որ ուրեմն մեր իշխանությո՞ւնն է փոխվել, թե ընդդիմությո՞ւնը, այդքան էլ էական չէ, թերեւս այս հարցադրումն էլ ճիշտ չէ, կարեւորը մեկ այլ բան է՝ պարզապես մեր երկիրն է փոխվել, ու սա պետք է ընդունել:

Սակայն այս փոփոխությունը ամենեւին էլ ակնառու չէ սահմանին: Այնտեղ, ինչպես հինգ-տասը տարի առաջ կրակում էին, այդպես էլ հիմա կրակում են: Մասնավորաբար, այն ժամանակ, երբ Րաֆֆի Հովհաննիսյանը, չընդունելով ընտրությունների արդյունքները, հանրահավաքների շարք սկսեց Ազատության հրապարակում, Տավուշի մարզում (ոչ թե ԼՂՀ-Ադրբեջան սահմանին, այլ հենց Հայաստան-Ադրբեջան սահմանին), ադրբեջանական կողմի դիպուկահարը երկու ժամը մեկ կրակ էր բացում, Նոյեմբերյանի Ոսկեպար գյուղի խաղաղ բնակիչը վիրավորվեց սեփական խաղողի այգում աշխատելիս: Հասկանշական է, որ սահմանում տիրող իրավիճակը մշտապես եղել է մեզ համար ներքին քաղաքական, քաղաքացիական անհնազանդությունը ճնշելու հրաշալի հիմնավորում: Մասնավորաբար, երբ ցանկություն է եղել ցրելու բողոքող, ընդդիմադիր, պատռելու-կոտրելու պատրաստ կրքոտ հանրահավաքավորներին, մշտապես ի ցույց է դրվել հենց սահմանը, ու երբ հանրահավաքի կազմակերպիչները փորձել են իրենց հետեւից ամենուր եկող հանրահավաքավորներին գրել, համոզել, որ տուն գնան, կրկին խոսել են սահմանում տիրող իրավիճակից: Այսինքն՝ սահմանը մեր քաղաքական դաշտում զսպաշապիկի պես մի բան է՝ իշխանությունների ձեռքին ներքին լարվածություն թույլ չտալու համար, եւ ընդդիմության ձեռքին՝ սեփական նահանջն արդարացնելու համար:

Իրականում քաղաքական այս կամ այն բեւեռի նահանջը չի նշանակում նահանջ երկրի համար, սովորաբար, գոնե մեր տարածքում, հաճախ լինում է ճիշտ հակառակը... Ու սկսվում է ռեալպոլիտիկը: Օրինակ՝ «Ժառանգության» փոխնախագահ Արմեն Մարտիրոսյանն ասել է, որ իրենք իշխանությունների հետ փոխհամաձայնության տարբերակներից մեկը տեսնում է այն, որ գործող նախագահը (նկատի ունի Սերժ Սարգսյանին՝ ի դեպ) կազմակերպի նոր խորհրդարանական ընտրություններ: Մարտիրոսյանն այդ մասին իհարկե ոչինչ չի ասել, բայց մենք հասկանում ենք, որ նոր խորհրդարանական ընտրություն կնշանակի նոր խորհրդարան, ինչն էլ կնշանակի կոնկրետ «Ժառանգության» ավելի մեծ թվով պատգամավորներ: Մյուս կողմից, Հովիկ Աբրահամյանը հայտարարել է, որ Րաֆֆին ոչ ցանկանում է վարչապետ դառնալ, ոչ էլ ցանկանում է ժողովրդին տուն հանել... Հետեւաբար, եթե Հովիկ Աբրահամյանը գիտի, որ Րաֆֆին վարչապետ դառնալ չի ցանկանում, ուրեմն Հովիկ Աբրահամյանը գիտի նաեւ, որ Րաֆֆիին նման առաջարկ արվել է, որից «Ժառանգության» առաջնորդը փաստորեն, հրաժարվել է... Ինչեւէ, սա քաղաքականություն է, իսկ այն, ինչ այսօր հայտարարել է սահմանամերձ Մովսես գյուղի գյուղապետը, ամենեւին էլ քաղաքականություն չէ: Գյուղապետն ասել է. «Մենք այստեղ միտինգ չենք անում, մենք այստեղ սահման ենք պահում»... Լավ է, լավ է, որ մեր երկիրը մի քիչ փոխվել է, եւ որ մեր երկրում կան մարդիկ, ովքեր քաղաքականություն չեն անում, այլ ուղղակի սահման են պահում:

**ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ**

# Սիրիահայ բժիշկի փորձառությունները Հայաստանում

***Սիրիայում ծավալված պատերազմական գործողությունների պատճառով սիրահայերից շատերն ապաստան փնտրեցին Մայր հայրենիքում՝ արժանանալով Հայաստանի կառավարության ընդունելությանն ու հոգածությանը։ Նրանցից մեկն էլ բժիշկ-սրտաբան Ջորջ Բարսեղյանն է։ Բժիշկն ընտանիքով Հայաստան էր եկել հունիսին՝ հանգստանալու։ Սակայն Սիրիայում իրավիճակը գնալով թեժանում էր, եւ ընտանիքը որոշում է հաստատվել Հայաստանում։ Սրտաբանը նախապես գիտեր, որ Հայաստանում դժվարությունների է հանդիպելու, հուսախաբություններ են լինելու, բայց «վերջը միշտ վարդագույն կտեսնեի, մինչեւ հիմա ալ այդ վարդագույնը, որ ուզած էի տեսնել՝ թերեւս կա, բայց քիչ մը փոխվում է մոխրագույնի...»։ Թե ինչպես է ապրում Հայաստանում եւ ինչ դժվարությունների է հանդիպել բժիշկը, փորձեցինք պարզել հենց իրենից։***

**- Հե՞շտ եղավ Ձեզ համար աշխատանք գտնելը, այդ հարցում աջակիցներ ունեցե՞լ եք։**

- Ես այժմ «Արմենիա» բժշկական կենտրոնի սրտաբանական բաժանմունքի աշխատակից եմ, բուժող բժիշկ։ Եվ անշուշտ ըսեմ, որ սփյուռքի նախարարությունը բավական գործեց ինձի ինչ-որ տեղ աշխատանք գտնելու համար։ Սակայն այնպես ստացվեց, որ այս աշխատանքն ուղղակի իմ սեփական ծանոթներու միջոցով կրցա գլուխ բերել։ Սփյուռքի նախարարությունը բավական օժանդակություն կուտա որոշ սիրիահայերու այստեղ աշխատանք գտնելու, ինտեգրվելու եւ իրենց տեղը գտնելու համար։ Նախարարության կազմը ժրաջան աշխատում է, փորձում է ինչ-որ տեղ մի բան հաջողցնել, որպեսզի սիրիահայերը կարողանան իրենց պահել եւ ինչքան հնարավոր է երկար մնան այստեղ։ Բայց երկրի պայմաններն են, որ պատի դէմ են կանգնեցնում սիրիահայերուն, շատ ծանր պայմաններում է գտնվում ներկայիս Հայաստանը՝ հատկապես տնտեսական առումով։

**- Բավականացնո՞ւմ է արդյոք աշխատավարձն ընտանիք պահելու համար։**

- Աշխատավարձը չի համապատասխանում իրականությանը բացարձակապես։ Ցավալի պահեր են ոչ միայն ինձի համար, այլեւ Հայաստանի գրեթե ողջ ազգաբնակչության համար։ Ինչպես կրնա բավականացնել բժիշկ-սրտաբանի մը պաշտոնական աշխատավարձը, որը կկազմե 32.500 դրամ։ Թերեւս հերթապահություններով, շաբաթական կամ ամսական հինգ-վեց հերթապահություններով աշխատավարձը կազմում է 60 հազար դրամ, իսկ այդ գումարը շատ ծիծաղելի է՝ մանավանդ սիրիահայերու համար, որի տան վարձը միայն կազմում է 400-500 դոլար։ Ցավալի է, որ երկրի տնտեսական վիճակն այնքան խայտաբղետ եղած է եւ անհասկանալի, որ ես պարտադրված եմ 60 հազար դրամով ընտանիք պահել։ Փաստորեն ես մինչեւ հիմա դեռեւս իմ խնայողությամբ եմ շարունակում ապրել, այն փոքրիկ գումարով, որ հետս բերած եմ Սիրիայեն։ Հետզհետե հասկանում եմ, որ 60 հազար դրամով մարդ որ չի կրնար գոյատեւել, ուր մնաց ապրել, այսինքն հարկադրված պիտի ըլլա գողնալու։

**- Գողնա՞լ։**

- Գողնալ որ կըսեմ, այս պարագայ կնշանակէ օրենքը խախտել։ Հասարակ բան՝ եթե, օրինակի համար, այստեղ հիվանդանոցում ինչ-որ մի հիվանդի նայում ես, որ ըսենք թե պետպատվերի շրջանակներու մեջ է, բուժման ծախսը պետությունն է հոգում եւ գնալու ժամանակ ինքը «Շնորհակալ եմ, բժիշկ ջան» ասելով գաղտագողի գրպանդ մի քանի հազար դրամ է մտցնում, ե՛ւ դու ես կարմրում, ե՛ւ ինքն է անհարմար զգում։ Այս ամբողջը գողության երեւույթ մըն է, որը մեր ժողովրդի առաքինության կհակասե։

**- Հե՞շտ էր այս միջավայրին ինտեգրվել, ապրել այստեղ։**

- Ինտեգրվել, ապրել ասելով շատ լայն ու տարբեր իմաստեր կհասկացվին։ Ըսեմ, որ մշակութային առումով շատ հաճելի է ապրել այստեղ՝ հայրենիքում։ Սա իմ մշակույթն է, իմ լեզուն, դուրս կուգամ հայերեն կխոսիմ, բայց տնտեսական առումով ահավոր է ու շատ դժվար։

**- Ինչպիսի՞ն է գործընկերների վերաբերմունքը։**

- Բավական դրական է։ Ըսեմ, հիվանդանոց, որ եկա ի սկզբանե հարգանքը կար իմ հանդեպ որպես սիրիահայի, որպես բժշկի։ Բոլորն էլ բարյացակամ էին իմ հանդեպ, փորձում էին ամեն կերպ օգտակար լինել, որի համար շնորհակալ եմ անձնակազմից։ Բայց ամիսների ընթացքում ես էլ իմ աշխատանքով իմ հանդեպ հարգանքը բազմապատկեցի։

**- Իսկ հիվանդները վստահո՞ւմ են Ձեզ։**

- Այո, ոչ մի տարբերություն չեմ նկատում։ Բոլորն ինձ դրական են վերաբերվում, մինչեւ հիմա դեռ բացասական ոչինչ տեսած չեմ իմ հանդեպ։

**- Ձեր սիրիահայ գործընկերներից մարզերում աշխատողներ կա՞ն։**

- Այո, մենք աշխատող ունենք Թալինում, Եղեգնաձորում։ Բայց պէտք է ըսեմ, որ հարցը երկու կողմեն պիտի դատել։ Համարյա մեծամասնությունը այն բժիշկներուն, որոնք այժմ ներկա կգտնվին Հայաստանում, եկած են այսպես ըսած «փափուկ» տեղերե։ Ամեն մեկն այնտեղ իր ունեցվածքն ուներ, իր աշխատանքը, իր հարգանքն ու պատիվը, կոպիտ ըսած՝ իրենց կենցաղով Սիրիայի բարձր դասակարգին կպատկանեին։ Այդ ցնցումն ապրելով հասկանալի է, որ մարդ պիտի ընտելանա քիչ մը վաս պայմաններու, բայց շրջանում աշխատող մեկու համար, որ Հալեպեն, Դամասկոսեն եկած է իր կենցաղով, իր ամեն ինչով շատ դժվար պիտի ըլլա, մանավանդ գումարի, եկամուտի առումով։

**- Ձեր երեխաները արդեն հարմարվե՞լ են նոր միջավայրին, նոր դպրոցին։**

- Տասը տարեկան Մեղրիս՝ փոքր աղջիկս, եւ տասներեք տարեկան Նարեկս, որոնք սովորում են N 54 դպրոցում, արդեն բավական ինտեգրված են, ուրախ են իրենց ընկերական շրջապատով, ուսուցչական կազմի վերաբերմունքով։ Ուսուցիչները շատ բարյացակամ են։ Աղջիկներս Սիրիայում հայկական դպրոց գնալով՝ այստեղ շատ դժվարություններ չունեցան։ Իրենց համար պարզապես որոշակի խնդիր եղավ արեւմտահայերենը արեւելահայերենով վերածելու հարցում, բան մը որ այդքան էլ դժվար չէր, որովհետեւ մենք արդեն Դամասկոսում հայկական հեռուստակայաններ էինք նայում, ծրագրերի էինք հետեւում։

**- Եթե Սիրիայում դրությունը խաղաղվի, պատրաստվո՞ւմ եք վերադառնալ։**

- Շատ եմ ուզում, շատ եմ ցանկանում, ամեն օր աղոթում եմ, որ այնտեղ դրությունը բարելավվի։ Ինչ վերաբերում է իմ վերադարձին, ինչպես ըսի՝ ես տրամադրված եկած եմ այստեղ մնալու, այստեղ խարիսխ նետելու՝ անտեսելով բոլոր դժվարությունները։

Հարցազրույցը վարեց՝
ԼԻԱՆՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

# Թամարա Վարդանյան. «Ադրբեջանցիներ. Մի անավարտ էթնիկ նախագծի պատմություն (պատմա-ազգաբանական ակնարկ)»

**(Մոսկվա, Ռուսկայա պանորամա, 2012, 88 էջ, ռուսերեն)**

Վերջերս Մոսկվայի սեւծովյան-կասպյան տարածաշրջանի քաղաքական եւ սոցիալական հետազոտությունների ինստիտուտը (ՍԿՏՔՍՀԻ)՝ «Կովկասյան հետազոտություններ» շարքով հրատարակել է պ.գ.թ. Թամարա Վարդանյանի «Ադրբեջանցիներ. Մի անավարտ էթնիկ նախագծի պատմություն (պատմա-ազգաբանական ակնարկ)» (Азербайджанцы: История одного незавершенного этнопроекта (историко-этнологический очерк) խորագրով մենագրությունը, որտեղ խորքային ուսումնասիրության են ենթարկված ադրբեջանցիների էթնիկ ծագմանն ու ինքնությանն առնչվող խնդիրները։ Աշխատության գիտական խմբագիրն է պատմաբան եւ քաղաքական գիտությունների դոկտոր Արմեն Այվազյանը, գրախոսներն են հումանիտար գիտությունների դոկտոր Ռասա Չեպայտենեն (Վիլնյուս, Լիտվա) եւ փիլիսոփայական գիտությունների թեկնածու Արթուր Ցուցիեւը (Վլադիկավկազ, ՌԴ)։

Գրքին նախորդում է երկու առաջաբան՝ մեկը հրատարակողի անունից գրել է ՍԿՏՔՍՀԻ-ի տնօրեն Վ. Զախարովը, մյուսը՝ գրքի գիտական խմբագիր Ա. Այվազյանը։

Իր նախաբանում Վ. Զախարովը նշում է, որ էթնոգենեզին վերաբերող ուսումնասիրությունները գիտության ամենաբարդ, սակայն, միեւնույն ժամանակ, ամենահետաքրքրական խնդիրներից են։ Այդ տեսանկյունից նա մեծապես կարեւորել է Թ. Վարդանյանի հետազոտությունը «ադրբեջանցի» էթնոնիմի վերաբերյալ, «որը դեռ 100 տարեկան էլ չէ»։ Հատկանշական է, որ Զախարովն անդրադարձել է գիտական եւ քաղաքական առումով կարեւոր հարցի, այն է՝ Բաքվում իրականացվող պատմության կեղծման երկակի ուղղությանը՝ մի կողմից ադրբեջանական էթնոսի պատմությունը՝ «հնացնելուն», մյուս կողմից՝ հարեւան Հայաստանի պատմությունն աղավաղելու արատավոր ավանդույթին։ Զախարովը նաեւ նշում է, որ ֆինանսական մեծ ներդրումներով կյանքի կոչվող նմանօրինակ կեղծգիտական հրատարակությունները արդեն վաղուց չեն արժանանում ո՛չ արեւմտյան, ո՛չ ռուսական գիտական հանրույթի ուշադրությանը, դրանք նաեւ չեն ներառվում կովկասագիտական հետազոտությունների աղբյուրագիտության մեջ։




Ա. Այվազյանն իր նախաբանում նկատում է, որ Թ. Վարդանյանի մենագրությունը «մեթոդաբանական տեսակետից միջառարկայական է, այն պատմագիտական ու ազգաբանական նշանակության հետ մեկտեղ, ունի նաեւ քաղաքագիտական արժեք»։ Այվազյանն այս աշխատությունն իրավացիորեն գնահատում է որպես ադրբեջանցիների ծագումնաբանությանը (էթնոգենեզին) նվիրված մի յուրահատուկ «քրեստոմաթիա՝ հիմնված սկզբնաղբյուրների, գիտական գրականության եւ մամուլի մանրակրկիտ վերլուծության վրա»։

Գրքի հեղինակ Թ. Վարդանյանը հետազոտության մեջ հանդես է բերել գիտական բարեխղճություն, իր աշխատանքն ամրագրել է բազմաթիվ ու բազմալեզու արժեքավոր սկզբնաղբյուրներով եւ գիտական գրականությամբ։ Հեղինակը հանգամանորեն քննարկել է իրանական, թյուրքական, կովկասյան եւ առհասարակ իսլամական ազդեցությունները ադրբեջանական ինքնության ձեւավորման հարցում, ուսումնասիրել ադրբեջանցիների ծագումնաբանության գործընթացը, ինքնանվանման (էթնոնիմի) փնտրտուքն ու բովանդակությունը, ադրբեջանական ինքնության բաղադրիչները թե՛ նոր, թե՛ նորագույն շրջաններում, խնդրի վերաբերյալ տարբեր հեղինակավոր հետազոտողների տեսակետները, նաեւ՝ 19-րդ դարի վերջին եւ 20-րդ դարի առաջին տասնամյակներին առկա աշխարհաքաղաքական այն իրողությունները, որոնք ի վերջո նպաստեցին Ադրբեջան պետության ու որպես հետեւանք՝ ադրբեջանական ազգի ստեղծմանը։

Մենագրության հեղինակը փորձում է գիտականորեն ապացուցել, որ էթնոգենեզի ադրբեջանցիների օրինակն արդյունք է «ոչ թե էթնոսի ազգայնացման, ինչպես ընդունված է կարծել, այլ՝ ազգի էթնիկացման»։ Հեղինակի կարծիքով՝ «ադրբեջանական էթնոս», «ադրբեջանցիների էթնիկ տարածք» եւ «էթնիկ ադրբեջանցի» եզրերը գիտականության տեսանկյունից ավելի շատ միֆոլոգեմներ են (ինչպես օրինակ՝ «սովետական մարդ» կամ «եվրոպական ինքնություն»)։ Խնդիրն այն է, որ տարբեր էթնոլեզվական, կրոնական, նույնիսկ ռասայական բաղկացուցիչներ ներառող «ադրբեջանական էթնոսի» ձեւավորման գործընթացը դեռեւս ավարտված չէ։ Ադրբեջանական ինքնության ձեւավորման ճանապարհին կարեւոր դեր է խաղացել անցումը իրանականությունից դեպի թյուրքականություն, սակայն այդ գործընթացն էլ կասեցվել է խորհրդայնացմամբ եւ նոր՝ ադրբեջանական ինքնության հռչակմամբ։ Ադրբեջանական ինքնությունն, ըստ էության, կայացման փուլում է, իսկ նրա կորիզը համարվող թյուրքականությունը՝ վիճարկվում է անգամ նույն Ադրբեջանում։

Թեեւ Ադրբեջանին ու ադրբեջանցիներին նվիրված աշխատությունների պակաս չկա, սակայն Թ. Վարդանյանի բարձրացրած հարցերն ու առաջարկած լուծումները նորույթ են։ Փաստորեն, առաջին անգամ փորձ է կատարվել ադրբեջանցիների էթնիկ ինքնության կառուցակցման բարդ գործընթացները քննել էթնոսի վերաբերյալ ժամանակակից տեսությունների լույսի ներքո եւ ադրբեջանցիների ծագումնաբանությունը ներկայացնել փաստարկված, հիմնավորված, կուռ եւ ամբողջական հայեցակարգի տեսքով։

Թամարա Վարդանյանի նշված աշխատանքը, որ նախատեսված է ինչպես մասնագիտական շրջանակների (պատմաբանների, արեւելագետների, ազգագրագետների, քաղաքագետների), այնպես էլ ընթերցող լայն հանրության համար, կարեւոր ներդրում է կովկասագիտական հետազոտությունների ոլորտում։ Աշխատանքի շահեկան կողմերից մեկն էլ այն է, որ գիրքը գրված է ռուսերենով եւ կարող է լավագույնս հակազդել այն բազմաթիվ կեղծգիտական թեզերին, որոնք հետեւողականորեն առաջ են մղվում Ադրբեջանում։

ԱՐԱՔՍ ՓԱՇԱՅԱՆ
Արեւելագետ, Արեւելագիտության ինստիտուտի գիտաշխատող, ԵՊՀ դոցենտ

# Եվ քառորդ դար տեւում է ՍՈՒՏԸ

Կարգավորման ինչ առաջարկություններ էլ արվեն, որքան էլ դիվանագետները «գլուխ կոտրեն», ԼՂ խնդրով բանակցությունների հաջողությունը կախված է եւ կախված է լինելու կողմերի հանրային տրամադրվածությունից: Իսկ այն ձեւավորվում է նաեւ տեղեկատվական քաղաքականությամբ: «Շփման գիծ», «զինադադարի գոտի» եւ նման՝ փոքր-ինչ դրական զգացողություններ սերմանող ձեւակերպումների փոխարեն Ադրբեջանում համառորեն գրում են «ռազմաճակատի գիծ», «մերձճակատային գոտի» եւ այլն:

Բաքվեցի «քաղտեխնոլոգներն իրենց բարձրության վրա» չէին լինի, եթե Ղարաբաղյան շարժման 25-ամյակի մեր տոնը չփորձեին կեղտոտել 25 տարի առաջ «Ասկերանի մոտ հեղված առաջին արյան» մասին տեղեկատվությամբ: «Զայրացած ԼՂԻՄ ժողպատգամավորների նստաշրջանի փետրվարի 20-ի «ապօրինի» (չակերտները մերն են - Վ. Ա.) որոշումից, փետրվարի 22-ին Աղդամի բնակիչները (բոլո՞րը - Վ. Ա.) շարժվեցին դեպի այն ժամանակվա Ստեփանակերտ (կարծես թե այսօր Ստեփանակերտ չէ - Վ. Ա.), որպեսզի իրենց վճռական բողոքը հայտնեն»,- այսպես է 25-ամյա վաղեմության դեպքը «հիմնավորում» ադրբեջանական լրատվամիջոցը (տես vesti.az):

Ինչո՞ւ Աղդամի «բնակիչները», ինչո՞ւ ԼՂԻՄ մարզխորհրդի նստաշրջանից երկու օր անց: Ինչո՞ւ, ասենք, Շուշիի ադրբեջանցիները չհավաքվեցին, որպեսզի «իրենց վճռական բողոքը հայտնեն»: Բայց հետեւենք շարադրանքին. «Ասկերանի մոտ նրանց (Աղդամի «բնակիչներին»- Վ. Ա.) դիմավորեց ագրեսիվ տրամադրված հայերի ամբոխը»: Տեսնո՞ւմ եք, Աղդամի «բնակիչները շարժվում են դեպի Ստեփանակերտ, որպեսզի իրենց վճռական բողոքը հայտնեն», իսկ երբ Ասկերանի մոտ նրանց դիմավորում են, ապա արդեն՝ ոչ թե բնակիչներ, այլ «ագրեսիվ տրամադրված հայերի ամբոխ»: Ըստ ադրբեջանական «քաղտեխնոլոգների», Ասկերանում աղդամցիներին երեւի պետք է ընդունեին աղուհացով, «Բարի գալուստ, թանկագին եղբայրներ» ցուցապաստառներո՞վ:

«Ծայր առած կոնֆլիկտի հետեւանքով հրազենից սպանվեցին երկու ադրբեջանցի պատանիներ, ավելի քան 50 մարդ ստացավ մարմնական վնասվածքներ»,- գրում է vesti.az-ը եւ ավելացնում, որ «հետագա արյունահեղությունը կանխեց, հին արեւելյան սովորույթով գլխաշորը ճանապարհին նետելով, այն ժամանակվա կոլտնտեսության նախագահ սոցիալիստական աշխատանքի հերոս Խուրաման Աբասովան»: Իսկ Աբասովան չէ՞ր կարող գլխաշորն ամբոխի ճանապարհին նետել ոչ թե Ասկերանում, այլ՝ Աղդամում: Թե՞ տեղյակ չէր, որ Աղդամի «բնակիչները շարժվել են դեպի Ստեփանակերտ, որպեսզի իրենց վճռական բողոքը հայտնեն»:

Կարող էր, բայց Ադրբեջանի ղեկավարությանը պետք էր, որպեսզի Աղդամի «բնակիչները» սարսափ տարածեին ԼՂԻՄ-ի հայ մեծամասնության վրա: Չէ՞ որ դեռեւս փետրվարի 12-ին Ադր. ԿԿ Կենտկոմի վարչական մարմինների բաժնի վարիչ Մահոմեդ Ասադովը (նախկինում՝ կուսակցության Շամքորի շրջկոմի 1-ին քարտուղար, որ 1987-ի աշնանը Չարդախլու հայկական գյուղի բռնատեղահանությունն էր կազմակերպել, իսկ հետագայում, լինելով ՆԳ նախարար, Գետաշենում գլխավորել 3000-ից ավելի հայ բնակչության վայրենի ջարդը) Ստեփանակերտում հայտարարել էր. «100 000 ադրբեջանցի պատրաստ է ամեն վայրկյան ներխուժելու ԼՂԻՄ եւ այն վերածելու գերեզմանոցի»:

Փաստացի ապացուցված է, որ 1988-ի փետրվարի 20-ին, Ստեփանակերտից անոթահար հեռանալով, Ադր. ԿԿ Կենտկոմի 1-ին քարտուղար Քյամրան Բաղիրովը կանգ է առել Աղդամում: Այնտեղ են հրավիրվել ԼՂԻՄ-ին հարակից ադրբեջանական բոլոր շրջանների ղեկավարները: Աղդամի «բնակիչների խաղաղ երթը» դեպի Ստեփանակերտ կանխածրագրվել է հենց այդ խորհրդակցության ժամանակ: Այդ է վկայում փաստը, որ նույն օրը՝ փետրվարի 22-ին Աղդամում է գտնվել Ադր. ԿԿ Կենտկոմի քարտուղար Հասան Հասանովը (տես http//azeribooks.ru/politika/zardusht–alizade/konets–vtoroy–respubliki.htm):

Այժմ տեսնենք, թե նույն միջադեպն ինչպես է ներկայացնում ադրբեջանցի քաղաքագետ Զարդուշտ Ալիզադեն. «Փետրվարի 23-ին (այդպես է բնագրում- Վ. Ա.) Բարդայի եւ Աղդամի բնակիչների ամբոխը շարժվել է դեպի Ստեփանակերտ՝ «հայերին դաս տալու»: Ասկերանի մոտ ամբոխը կանգնեցվել է, սպանվել են երկու երիտասարդ՝ Ալի եւ Բախտիար անունով: Հստակ հայտնի է, որ նրանցից մեկին խոցել է ադրբեջանցի միլիցիոների գնդակը... Բնականաբար, հրաձգության եւ երկու երիտասարդի սպանության մասին տեղեկատվությունը Բաքու է հասել անորոշ ձեւով՝ առանց ճշտելու, թե ով է կրակել, եւ ինչպես է դա տեղի ունեցել» (տես http://azeribooks.narod.ru/politika/zardusht–alizade/konets–vtoroy–respubliki.htm):

Սա է ոչ լրիվ բացահայտված փաստը: Իսկ ո՞ւմ էր պետք, որպեսզի արյուն հեղվի: Նրան, որ փետրվարի 20-ին իր ժողովրդական բանաստեղծի՝ Բախտիար Վահաբզադեի շուրթերով ոռնացել էր. «Հողն արյամբ է նվաճվում, հողից բաժին չի տրվում»: Անցել է քառորդ դար, եւ Ադրբեջանում, ցավոք, ոչինչ չի փոխվել: Այլապես պետական հովանավորության լրատվամիջոցը չէր հիշեցնի «Ղարաբաղում հեղված առաջին արյան փաստը»:

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

# Մոսկվան կների Կուբայի պարտքի մի մասը

Ռուսաստանը եւ Կուբան փետրվարի 21-ին նախաստորագրել են համաձայնագիր ԽՍՀՄ-ի հատկացրած վարկերի գծով Ռուսաստանին Կուբայի պարտքի կարգավորման վերաբերյալ: Երկու երկրների ներկայացուցիչները նաեւ կնքել են ռուսական օդանավերի մատակարարմանը վերաբերող երկու համաձայնագիր:

ՌԴ պատվիրակության բարձրաստիճան պաշտոնյաներից մեկը ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի թղթակցին ասել է, որ նախաստորագրված համաձայնագիրը «մասնանշում է հետագա աշխատանքի ընդհանուր ուղղությունը»: Փաստաթղթի տակ ստորագրել են ՌԴ փոխարտգործնախարար Սերգեյ Ռյաբկովը եւ Կուբայի փոխվարչապետ Ռիկարդո Կաբրիսասը:

Կուբայի պարտքը Ռուսաստանին ավելի քան 30 մլրդ դոլար է, որի մի մասը դուրս կգրվի: Մինչեւ առաջիկա սեպտեմբեր բոլոր ձեւական կողմերը պետք է համաձայնեցվեն:

Ինչ վերաբերում է ռուսական օդանավերի մատակարարման երկու համաձայնագրերին, դրանց ընդհանուր գումարը 650 մլն դոլար է: Կուբան կստանա երեքական «Ան-158» եւ «Իլ-96-400» եւ երկու «Տու-204 ՍՄ»:

Բացի դրանից, նախատեսվում է պահեստամասերի հավաքածուներ առաքել Կուբայում արդեն շահագործվող օդանավերի համար:

Վարչապետ Դմիտրի Մեդվեդեւի գլխավորությամբ ՌԴ պատվիրակությունը Կուբա էր ժամանել Բրազիլիայից, որտեղ ստորագրվել էին երկկողմ մի շարք առեւտրատնտեսական, ռազմական եւ գիտական պայմանագրեր: Փետրվարի 21-ին Մեդվեդեւը նաեւ այցելել է Հավանայում 22-րդ անգամ անցկացվող ամենամյա Գրքի միջազգային տոնավաճառ:

# Իսրայելը նավթ կփնտրի Գոլանի բարձունքներում

Իսրայելի էներգետիկայի նախարարությանն առընթեր նավթարդյունաբերության գործերի վարչությունը որոշել է Գոլանի բարձունքներում նավթի որոնման առաջին արտոնագիրը տալ: Այն կստանա «Ջինի» ընկերությունը, որի ղեկավարը նախկին նախարար եւ պահեստի բրիգադային գեներալ Էֆի Էյթամն է:

«Գլոբս» թերթը գրում է, որ արտոնագրի հանձնումը պայմանավորված է բացառապես պրոֆեսիոնալ նկատառումներով, չնայած տվյալ քայլի քաղաքական երանգին: Իսրայելը Գոլանի բարձունքները բռնակցեց 1981 թվականին, բայց այդ քայլը մինչեւ օրս միջազգայնորեն չի ճանաչվել:

Արդեն 2012-ի մայիսին էներգետիկայի նախարար Ուզի Լանդաուն հայտարարել էր, որ Գոլանի բարձունքներում նավթի որոնումներ են սկսվելու: Այն ժամանակ ի հայտ էր եկել ենթադրություն, որ տվյալ շրջանում առկա են օգտակար հանածոների հարուստ հանքավայրեր: Այդ լուրը զայրացրել էր Սիրիայի կառավարությանը: SANA լրատվական գործակալությունն անմիջապես հայտարարել էր, որ «Իսրայելը նավթ է գողանում օկուպացված Գոլանում», խախտելով միջազգային իրավունքի բոլոր նորմերը: Դամասկոսը համաշխարհային ընկերակցությանը կոչ էր արել վերջ դնել դրան:

ՄԱԳԱՏԷ

# Իրանը տեղադրում է նոր տիպի ցենտրիֆուգներ




**Իրանցիները սկսել են նոր տիպի ցենտրիֆուգներ տեղադրել Նաթանզի միջուկային օբյեկտում: Այդ մասին հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը, վկայակոչելով ՄԱԳԱՏԷ-ի վերջին զեկուցագիրը:**

**IR-2m նոր ցենտրիֆուգները թույլ կտան արագացնել ուրանի հարստացումը: ՄԱԳԱՏԷ-ն նաեւ նշում է, որ միջուկային օբյեկտում նախապատրաստված նոր տեղամասերում ապագայում կդրվեն նոր ցենտրիֆուգներ:**

**ՄԱԳԱՏԷ-ի փետրվարյան տվյալներով, Իրանն ունի մինչեւ 20 տոկոս հարստացված 167 կգ ուրան: Տեսականորեն ատոմային ռումբ պատրաստելու համար անհրաժեշտ է եւս 250 կգ: Գործակալությունը հաստատում է, որ 2012-ի դեկտեմբերից Իրանը սկսել է հարստացված ուրանն օգտագործել միջուկային վառելիքի արտադրության նպատակով: Փորձագետների գնահատումների համաձայն, արդեն ծախսվել է մոտ 28 կգ 20 տոկոսանոց ուրան:**

**Ավելի վաղ Իրանը ՄԱԳԱՏԷ-ին ծանուցել էր նոր ցենտրիֆուգներ տեղադրելու մտադրության մասին. դրանք 2-3 անգամ կարագացնեն ուրանի հարստացման գործընթացը:**

**2010 թվականից Նաթանզում 20 տոկոսանոց ուրան է ստացվում: ԵՄ-ի մի շարք երկրներ, ԱՄՆ-ը, Իսրայելը, Ռուսաստանը եւ Չինաստանը երկյուղներ են արտահայտում, թե այդ ծրագիրն անհրաժեշտ է միջուկային զենքի ստեղծման համար, եւ Իրանից պահանջում են դադարեցնել ուրանի հարստացումը: Իրանում պնդում են, որ միջուկային ծրագիրը ծառայում է գիտական եւ բժշկական նպատակների, ընդգծելով, որ ատոմային զենքի արտադրության համար անհրաժեշտ է մինչեւ 80 տոկոս եւ ավելի հարստացված ուրան:**

**Իրանցիների միջուկային ծրագիրը մտահոգում է մանավանդ Իսրայելին, որը քանիցս սպառնացել է օդային հարվածներ հասցնել Իրանի միջուկային օբյեկտներին: ԱՄՆ-ը եւ ԵՄ-ը ձեռնարկել են հակաիրանական տնտեսական պատժամիջոցներ, որոնց հետեւանքով, ըստ ՄԱԳԱՏԷ-ի, նավթի արտահանության ոլորտում 2012-ին Իրանը 40 մլրդ դոլարի կորուստ է ունեցել: Այդուհանդերձ իրանցիներն առայժմ հրաժարվում են զիջումներ անել:**

# Եգիպտոսում ոստիկաններին թույլատրեցին մորուք կրել



**Եգիպտոսի դատարանը իրավապահ մարմինների աշխատակիցներին թույլատրել է մորուք պահել: Դրանով իսկ չեղյալ է հայտարարվել այն բանավոր հրահանգը, ըստ որի մորուքներն արգելված են: Արգելքը, որի հիմքը ոստիկանության լիակատար հնազանդությանը հասնելու աշխարհիկ իշխանությունների ձգտումն էր, գործում էր մի քանի տասնամյակ:**

**Մորուք պահող մի խումբ ոստիկաններ շաբաթներ առաջ աշխատանքից հեռացվել էին դեռ նախագահ Հոսնի Մուբարաքի օրոք արված կարգադրության հիման վրա: Նրանք դիմել էին Կահիրեի բարձրագույն վարչական դատարանին, որն էլ դատավճիռ էր կայացրել նրանց օգտին:**

**«Ալ Ահրամ» թերթը գրում է, որ Եգիպտոսի փողոցներում մորուքավոր ոստիկաններ սկսեցին հայտնվել 2012-ի խորհրդարանական ընտրություններից հետո, որոնցում հաղթանակ տարան «Մուսուլման եղբայրները»: Սակայն օրենքի պահապանները պնդում են, թե չարժե իրենց մորուքները գնահատել որպես այս կամ այն կուսակցության կողմնակցության նշան:**

**Իր հերթին «Ալ Արաբիա» հեռուստաալիքը նշում է, որ ժամանակակից Եգիպտոսում մորուք պահում են ինչպես իսլամիստները, այնպես էլ աշխարհիկ բնակիչները: Այդուհանդերձ դատավճիռն արդեն ընկալվում է որպես իսլամիստների հարաճուն ազդեցության վկայություն եւ լրջորեն անհանգստացնում քրիստոնյա ղպտիներին, ինչպես նաեւ ազատական իսլամի կողմնակիցներին:**

# Մշակույթ

ԻՍՊԱՆԻԱ

## Սերվանտեսի լեզուն հայուհու իմացականությամբ


Լիլիթը մրցույթի պահին

Լիլիթ... Անուն, որն իսպանացիների շուրթերին հնչում է որպես իսպանագիտության չափանիշ: Անուն, որն արդեն շուրջ հինգ ամիս է, ինչ հեռուստացույցին է գամել իսպանահայությանը՝ այդ անվանը հավասարիմ երկրպագուներին:

Թերեւս հայաֆիչ այս երկրում այս անունն ամենեւին էլ հայկական երանգ չստանար, եթե Լիլիթի իսպաներեն խոսակցականում այդքան շեշտադրված չլիներ նույն այդ երանգը, որն այդքան հարազատ է իսպանահայերիս: Իսկ եթե այն հեռուստախաղը, որին մասնակցում է Լիլիթը, այդքան հանրաճանաչ չլիներ, ապա առավել եւս դժվար կլիներ հայտնաբերել իսպանաբնակ այս տաղանդաշատ հայուհուն:

Աշխարհասփյուռ հայության հետքերը որոնելու հայերիս բարենպաստ սովորությունը մեզ հանգիստ չի տալիս այնքան ժամանակ, մինչեւ որ լիովին չհամոզվենք, որ փնտրվողն իրոք հայ է, եւ որ մենք չենք սխալվել մեր ուղին ընտրելիս: իսկ ի՞նչը, եթե ոչ ազգանվան «յան» վերջավորությունը կարող է լավագույն հիմքը հանդիսանալ հայկական արմատի առկայության: Այնպես որ, պրպտեցինք եւ գտանք...

Մանուկյան... Ազգանուն՝ որ Լիլիթ անվան կողքին գրեթե բարեհունչ երաժշտություն է հնչում ոչ միայն հայերիս, այլ նաեւ օտարների համար: «Գիտե՞ս որ «Պասապալաբռա» («Pasapalabra») խաղին հայուհի է մասնակցում»,- մի օր հարցրեց իսպանացի ծանոթներիցս մեկը: «Այո՛, իհարկե,- պատասխանեցի,- իսկ դու ի՞նչ իմացար»: «Նախ խոսելու ձեւից, ապա տվյալներ փնտրեցի համացանցում եւ գտա ազգանունը՝ Մանուկյան,- ասաց նա եւ ապա, դիմելով ընկերոջը, ավելացրեց,- նա այնպիսի բառեր գիտի իսպաներեն, որ մենք կյանքում չենք էլ լսել»:

Լիլիթ Մանուկյան (Lilit Manukyan)... Ես կասեի քայլող հանրագիտարան, ով մասնակցում է «ամենաիսպաներեն» խաղին՝ «Պասապալաբռային» (Pasapalabra), որ հայերեն թարգմանությամբ կնշանակի «Անցիր բառը»: Սա իսպանագիտությանը վերաբերող ամենաընդհանրացնող, դժվար եւ հետեւաբար՝ հետաքրքրական հեռուստախաղն է, որը ցուցադրվում է ազգային 5-րդ ալիքով (Telecinco): Խաղում ընդրկված են իսպանագիտության ողջ բառարանն ու հանրագիտարանը, ինչպես նաեւ՝ համաշխարհային բոլոր գիտությունները՝ իրենց հին ու նոր դեմքերով ու դեպքերով: Մինչեւ վերջնախաղին հասնելը, մրցողներն աշխատում են որքան հնարավոր է շատ վայրկյաններ հավաքել, որոնք անհրաժեշտ են մտածելու շատ ժամանակ ունենալու համար: Վերջնախաղում մասնակիցները մոտ 2-3 րոպեի ընթացքում պետք է մեկ բառով պատասխանեն 25 հարցի, որոնք սկսվում են իսպաներեն այբուբենի 25 տառերով: Միայն այդ դեպքում մրցողը կարող է տանել ավելի քան մեկ տարվա ընթացքում հավաքված ընդհանուր գումարը, որը կազմում է ոչ ավել, ոչ պակաս, քան 1 միլիոն 90 հազար եվրո: Մեկ սխալի կամ բոլոր հարցերին չպատասխանելու դեպքում հաշվվում են ճիշտ պատասխանները, եւ հաղթողը հաջորդ խաղին մասնակցելու իրավունք է ստանում՝ ամեն խաղին վաստակելով 1200 եվրո:

Ահա այսպես, Լիլիթ Մանուկյանի հաղթարշավն ընդգրկում է դեռեւս 25 խաղ, որոնց ընթացքում յուրաքանչյուր խաղում նա առնվազն 20 ճիշտ պատասխան է տվել եւ վաստակել գրեթե 30.000 եվրո:

Ռուսաստանում ծնված մեր հայրենակից Լիլիթ Մանուկյանը մոտ 6 տարի է, ինչ բնակվում է Իսպանիայի Վալենսիա քաղաքում, եւ այդ ընթացքում հասցրել է հնարավորինս ամբողջական ուսումնասիրել Իսպանիայի Թագավորական ակադեմիայի (Real Academia Espanola - RAE) հրատարակած բառարանը: Իր արտակարգ խելացիությամբ ու չափազանց համեստությամբ՝ Լիլիթը կարողացել է վաստակել ողջ Իսպանիայի սերն ու համակրանքը: «Իզուր չէ, որ ասում են, թե դուք՝ հայերդ, աչքի եք ընկնում խելքով ու տաղանդով: Ապացույցը՝ Հայաստանի շախմատի գերտերություն լինելն է, որն այս էլ երրորդ անգամ ապացուցեցիք աշխարհին»,- ասաց ծանոթս:

Հաճելի է լսել այս խոսքերը եւ առավել հաճելի՝ ունենալ Լիլիթի նման հայրենակիցներ: Հաջողությո՛ւն ենք մաղթում քեզ, Լիլի՛թ: Դու արդեն հաղթել ես՝ ողջ Իսպանիայի առջեւ հայտարարելով, որ հայ ես:

ԱՐԱՐԱՏ ՂՈՒԿԱՍՅԱՆ
Իսպանիա, Վալենսիա

## Արթուր Իսպիրյան. «Կոմերցիայի մասին չեմ մտածել, չեմ էլ մտածելու: Կոմերցիան ինձ համար ռաքիսն է»



Երգիչ **Արթուր Իսպիրյանը** թողարկել է նոր խտասալիկ, որը կոչվում է «Ժամանակին Երեւանում»: Այն բաղկացած է 11 երգերից, եւ Մարտին Վարդազարյանի ու Երվանդ Երզնկյանի համատեղ համագործակցության արդյունքն է:

Արթուր Իսպիրյանը թողարկել է մի շարք ձայնասկավառակներ, որոնցում ներառված են տարբեր ժամանակաշրջանների էստրադային գործեր:

«Ձայնասկավառակներ եմ թողարկել, որոնցում ներառված են 1980-ականների, իսկ մյուսում՝ 60-ականների հայկական էստրադայի լավագույն ստեղծագործությունները:

Էլ ավելի հետ գնալով ձայնագրեցի նաեւ 50-ականների էստրադային երգերը: Դրանից հետո էլ Մարտին Վարդազարյանի եւ Երվանդ Երզնկյանի հետ զրուցեցի՝ իմանալու, թե դրանից առաջ ինչ է հնչել հայկական էստրադայում: Ժողովրդական երաժշտությանը ծանոթ ենք, սակայն հայկական էստրադայի սկզբին, առաջին գոհարներին ծանոթ չենք: Հրաշալի եւ բանիմաց կոմպոզիտոր, անցյալը շատ լավ իմացող Մարտին Վարդազարյանն ավելի շատ բան գիտի այդ երաժշտության մասին, քան մեր արխիվներում կա, ու մենք գտանք ամենահին երգերը՝ գրամաֆոնային ձայնագրությունները: Արդյունքում հավաքեցինք լավագույնները եւ ստեղծվեց «Ժամանակին Երեւանում» ձայնասկավառակը»:

Մի առիթով Արթուր Իսպիրյանն ասել էր, որ «Inspiration» ձայնասկավառակից հետո նոր ձայնասկավառակ չի ձայնագրելու: Թե ո՞րը եղավ պատճառը եւս մեկը ձայնագրելու հարցին ի պատասխան, նա ասաց. «Inspiration» ձայնասկավառակի վրա շատ աշխատեցի: Սակայն ձայնասկավառակը թողարկելուց հետո ինձ մոտ դատարկություն էր, այդ իսկ պատճառով որոշեցի եւս մի ձայնասկավառակ թողարկել»:

Ա. Իսպիրյանն ստեղծագործելիս երբեք կոմերցիայի մասին չի մտածում. «Ջազային երաժշտությունը, տրիոները երբեք կոմերցիոն չեն եղել: Իմ արվեստը եւս եկամտաբեր երբեք չի եղել եւ չեմ էլ սպասել եկամուտի: Ես իմ պարտքն եմ կատարում: Այժմ շատ բան է փոխվում, ձայնասկավառակային դարն արդեն անցնում է, մարդիկ էլ չեն գնում այն, տարբեր կայքերում տեղադրելով են երգերը վաճառվում: Իմ բոլոր ձայնասկավառակները ամերիկյան կայքերում են վաճառվում եւ այդ տարբերակով են երաժիշտների մի մասը գումար վաստակում: Կոմերցիայի մասին չեմ մտածել, չեմ էլ մտածելու: Կոմերցիան ինձ համար ռաքիսն է»:

Արթուր Իսպիրյանի հաջորդ ձայնասկավառակը կազմված կլինի դուետներից, որի վրա շատ դանդաղ է աշխատում. «Դուետներ կլինեն շատ տաղանդավոր երգիչ-երգչուհիների հետ՝ անգլերեն լեզվով: Կհնչեն ամենահայտնի երգերը, անհայտ կատարողների հետ, որոնք կլինեն նոր ձեւաչափով՝ ռիթմը փոխված»:

Ինչպես «**Ազգին**» հաղորդեց երգիչը, ձայնասկավառակի միջոցով նա իր բողոքն է արտահայտելու, որ տաղանդաշատ երիտասարդները մնում են էկրանից այն կողմ: «Արդեն երեք երգ ձայնագրել եմ՝ Անուշ Բադալյանի, Ալիսա Դարբինյանի հետ: Հաջորդ երգի համար կատարող եմ փնտրում եւ երբեմն երգի բառերը թույլ չեն տալիս, որպեսզի 18 տարեկանի հետ երգեմ»: Թե ինչպես կկոչվի հաջորդ ձայնասկավառակը, երգիչը դեռ չի որոշել. «Անվանումը որոշում եմ այն ժամանակ, երբ ձայնասկավառակը պատրաստ է լինում»:

Ա. Իսպիրյանն իր ժողովրդին համարում է շատ տաղանդավոր եւ երաժշտական, ուղղակի, ըստ նրա, հարկավոր է ճիշտ ուղղություն ցույց տալ երիտասարդությանը. «Մի շարք երկրներում եմ եղել եւ այնպիսի ազգ չեմ ճանաչում, որ այսքան քիչ լինելով հանդերձ նման տաղանդավոր արվեստագետներ ունենա»:

Երգիչն իրեն մելոման է համարում, ինչպես նաեւ, ինչպես ինքն է ասում, հստակորեն տարբերում է երաժշտական ժանրերը, սակայն այսօրվա «հայկական էստրադա» կոչվածը, ըստ նրա, ոչ մի ժանրի չի պատկանում. «Այսօրվա հայկական էստրադան նոր «մշակույթ» է՝ անհայտ ծագումով եւ անգրագետ ձեւով մատուցվող: Երկար տարիներ ապրել եմ ԱՄՆ-ում եւ կարող եմ ասել, որ այնտեղի անվանի աստղերը միշտ գլուխ են խոնարհում այն երաժիշտների առջեւ, որոնցից սովորել են: Չկա այնպիսի լավ երաժիշտ, որը որեւէ մեկից սովորած չլինի: Ցավոք, այսօր մեր երաժիշտները մեկը մյուսից են սովորում, չեն ցանկանում անցյալը հիշել եւ լսել»,- եւ ավելացրեց. «Այն ինչ ցուցադրվում է հեռուստատեսությամբ, ոչ մի կապ չունի մեր արվեստի հետ: Մեր ակումբներում հնչում է հրաշալի եւ պրոֆեսիոնալ երաժշտություն, Հայաստանում հրաշալի դասական, ջազային համերգներ են տեղի ունենում, ունենք նաեւ հիանալի երաժիշտներ, որոնց չենք տեսնում հեռուստատեսությամբ»:

Արթուր Իսպիրյանը հույս հայտնեց, որ դեռ կլինի մեկը, որ կվերականգնի մեր հեռուստատեսությունը եւ կցուցադրի իսկական մշակույթ:

Երգիչը հայտնեց եւս մի նորություն՝ դա «Հիշում ես դու» ֆիլմն է. «12 րոպեանոց ֆիլմ ենք նկարահանել՝ նվիրված Արտեմի Այվազյանին: Գլխավոր դերակատարը ես եմ եւ ֆիլմում երգում եմ 3 երգ նրա ստեղծագործություններից՝ «Հիշում ես դու», «Ուր ես դու», «Զարո», վերջինս նվիրված է Ա. Այվազյանի կնոջը»:

Իսպիրյանը նշեց, որ դիմել է մշակույթի նախարարությանը, որն աջակցել է Արտեմի Այվազյանի 110-ամյակին նվիրված տեսաֆիլմի արտադրմանը: Ֆիլմը նկարահանեց Հրանտ Մովսիսյանը: Իսկ Արտեմի Այվազյանի թոռնիկը մանրամասն պատմեց պապի մասին, թե ի՞նչ էր հագնում, ուտում, սիրում, ովքեր էին նրա հյուրերը, ի՞նչ էր սիրում անել օրվա ընթացքում: Այդ ամենը ուսումնասիրելուց հետո ընտրեցին փոքրիկ սենյակ, որը շատ նման էր Արտեմի Այվազյանի սենյակին»:

Ընդգծենք, որ տեսաֆիլմը նկարահանվել է 4 օրում: Ֆիլմը եթերով ցուցադրելու համար Ա. Իսպիրյանը չգիտի, թե ում դիմի. «Այդ ֆիլմը չի սազում այսօրվա հեռուստաալիքներին: Չեմ պատկերացնում, թե այդ անմակարդակ սերիալներից հետո ինչպես պետք է այդ ֆիլմը ցուցադրվի: Միակ հեռուստաալիքը, որ ողջունեց այդ քայլը, դա ԱՐ-ն էր: Հ2-ն էլ մի անգամ ցուցադրեց: Այսօրվա հեռուստաընկերությունների ղեկավարներին չեն հետաքրքրում անցյալի գոհարները»:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

## Հանդիպում նկարիչ-լրագրող Ցոլակ Կանթեղի հետ



Հանրապետության եւ գրական ու լրագրական եւ գեղանկարչական ասպարեզում Ցոլակ Կանթեղը (Ղանդիլյան) ճանաչված անուն է, ու պատահական չէ, որ երեկ Ավետիք Իսահակյանի անվան քաղաքային կենտրոնական գրադարանում գրականության եւ արվեստի շատ գործիչներ էին հավաքվել՝ ըմբռշխնելու նրա գեղարվեստական աշխարհը:

Ծնվել է հունիսի 24-ին՝ Լենինականում (այժմ՝ Գյումրի), Ս. Մերկուրովի անվան կերպարվեստի դպրոցում աշակերտել է հետագայում հայտնի գեղանկարիչ Հակոբ Անանիկյանին, ապա ուսումը շարունակել Երեւանի Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարանում: Աշխատակցել է «Գրական թերթ», «Ավանգարդ», «Խորհրդային Հայաստան» «Դպրություն», «Ոզնի», «Կանչ» (նախկինում «Պիոներ կանչ») եւ այլ պարբերականների, ձեւավորել «Զորավար Անդրանիկ» թանգարանը:

Բացման խոսքով հանդես եկավ թատերագետ **Լեւոն Մութաֆյանը**, վերջինս հակիրճ ներկայացրեց արվեստագետի անցած ուղին:

Այնուհետեւ խոսեց մանկագիր **Սուրեն Մուրադյանը**, հավելելով, որ մի շարք հայ մեծանուն հեղինակների նկարազարդումների հետ պետք է նկարազարդվեն նաեւ Ղազարոս Աղայանի գրքերը:

Ելույթներով հանդես եկան մի շարք մտավորականներ ու արվեստագետներ, որոնց թվում էին գրականագետ **Լյուդվիգ Կարապետյանը**, արձակագիր եւ հրապարակախոս Գրիգոր Ջանիկյանը եւ այլք:

Միջոցառումն ամփոփեց գրադարանի տնօրեն, արվեստի վաստակավոր գործիչ **Համիկ Կարապետյանը**:

ԳԱՐԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ
Լուսանկարը՝ Արման Երիցյանի

# Կարեն Գրիգորյանը կայծակնային մրցաշարի հաղթող



Ֆրանսիական Ռոշֆորում անցկացվող շախմատի փառատոնի շրջանակներում կայացավ կայծակնային մրցախաղ, որում հիանալի հանդես եկավ միջազգային վարպետ Կարեն Գրիգորյանը: Հայ շախմատիստը 11 հանդիպումներում վաստակեց 9,5 միավոր եւ արժանացավ գլխավոր մրցանակին:

Գրիգորյանը մրցաշարում հաղթեց Ֆիլիպե Մայերին, Ջուլիեն Սաադային, Լուկ Մոնտեուին, Ադրիեն Դեմուտին, Սլավիսա Պերիչին, Յուու-Թի Դոյին, Խոսե Սեքյուերային եւ Ռոմաին Պիկարդին, պարտություն կրեց Վլադիմիր Մինկոյի, Կորե Ակշայրաջի ու Դանիել Պուլվեսի հետ:

8,5 միավորով 2-րդ տեղը գրավեց ռուսաստանցի ՖԻԴԵ-ի վարպետ Վլադիմիր Մինկոն: 8 միավորով 3-րդ մրցանակակիր դարձավ վենեսուելացի Դանիել Պուլվեսը: Սամվել Տեր-Սահակյանը կայծակնային մրցաշարին չմասնակցեց:

Ինչ վերաբերում է դասական շախմատի մրցաշարին, ապա այստեղ վերջին տուրից առաջ իրավիճակը բավականին սրվել է: Մրցաշարի միանձնյա առաջատար Կարեն Գրիգորյանը 8-րդ տուրում ոչ-ոքի խաղալով Կորե Ակշայրաջի հետ, վաստակեց 6 միավոր: Իսկ ահա վրացի գրոսմայստեր Դավիթ Ջոջուան սեւերով հաղթելով Անդրեյ Իստրատեսկուին, վաստակեց 6,5 միավոր ու միանձնյա գլխավորեց աղյուսակը:

Տուրը հաջող էր Սամվել Տեր-Սահակյանի համար, որը սեւերով պարտության մատնելով Քուենտին Լուիսեային, վաստակեց 6 միավոր: Նա Գրիգորյանի եւ Վլադ-Քրիստիան Ջիանուի հետ հետապնդում է առաջատարին:

Ավարտական տուրում կայանալիք պարտիաներից ամենավճռորոշը կլինի Սամվել Տեր-Սահակյանի մրցավեճը Դավիթ Ջոջուայի հետ: Այդ պարտիայում Սամվելը խաղալու է սեւ խաղաքարերով: Կարեն Գրիգորյանն էլ սեւերով մրցելու է Ջիանուի հետ:

# «Ատլետիկոն» վայր դրեց Եվրոպայի լիգայի գավաթակրի լիազորությունները



Հայտնի դարձան ֆուտբոլի Եվրոպայի լիգայի 1/8 եզրափակիչի մասնակիցները: Շատ հաջող հանդես եկան ռուսական ակումբները, որոնք հաղթահարեցին 1/16 եզրափակիչի արգելքը:

Կազանի «Ռուբինը» Եվրոպայի լիգայի ներկայիս գավաթակիր Մադրիդի «Ատլետիկոյի» հետ մրցավեճում առաջին խաղում հյուրընկալվելիս 2-0 հաշվով հաղթել էր եւ լուրջ հայտ էր ներկայացրել հաջորդ փուլի ուղեգրի համար: Կազանում կայացած պատասխան խաղում «Ռուբինը» մեծ ուժերով պաշտպանվելով, կարողացավ պահպանել 2 հանդիպումների ընդհանուր արդյունքը: Միայն 84-րդ րոպեին «Ատլետիկոյի» ռմբարկու Ֆալկաոյին հաջողվեց խոցել մրցակցի դարպասը: Ի դեպ, Ֆալկաոն Եվրոպայի լիգայի հանդիպումներում 31-րդ անգամ խաղադաշտ մտավ՝ դառնալով ռեկորդակիր: Նա գերազանցեց «Էյնդհովենի» հարձակվող Օլա Տոյվոնենի եւ Լիսաբոնի «Սպորտինգի» դարպասապահ Ռուի Պատրիսիուի ցուցանիշը, որոնք 30-ական խաղ էին անցկացրել: Հիշեցնենք, որ Ֆալկաոն 2 տարի անընդմեջ «Պորտոյի» եւ «Ատլետիկոյի» կազմերում դարձել էր Եվրոպայի լիգայի գավաթակիր:

Պայքարը կշարունակի նաեւ Սանկտ Պետերբուրգի «Զենիթը», որն առաջին խաղում սեփական հարկի տակ 2-0 հաշվով հաղթել էր «Լիվերպուլին»: Պատասխան խաղը շատ հաջող սկսվեց «Զենիթի» համար: Արդեն 19-րդ րոպեին Հալկը գրավեց «Լիվերպուլի» դարպասը՝ էլ ավելի ամրապնդելով մրցակցի նկատմամբ ունեցած առավելությունը: Ճիշտ է, արդեն 59-րդ րոպեին դաշտի տերերը հաշիվը դարձրին 3-1, սակայն վճռորոշ 4-րդ գոլը խփել չկարողացան:

Խաղից հետո թիմերի մարզիչները հետեւյալ կարծիքն արտահայտեցին:

**Բրենդան Ռոջերս** («Լիվերպուլ») - Մենք հպարտ ենք մեր ակումբով ու ֆուտբոլիստներով: Այսօր նրանք կրկին ապացուցեցին, թե ինչո՞ւ են աշխարհի ուժեղագույն ակումբներից մեկում խաղում: Նրանք ամեն ինչ արեցին հաջորդ փուլ մտնելու համար, երկրպագուներն էլ բուռն կերպով աջակցեցին: Ցավոք, այդ ամենը բավական չեղավ 1/8 եզրափակիչ մտնելու համար:

**Լուչանո Սպալետտի** («Զենիթ») - Այսօր այնպիսի հանդիպում էր, որի ելքը մինչեւ վերջին րոպեն անորոշ էր: Իհարկե, նյարդայնացանք: Բայց մեր ֆուտբոլիստներն արեցին ամեն ինչ, որպեսզի հաղթող դուրս գան «Լիվերպուլի» հետ երկռաունդանոց մրցավեճում:

Ռուսաստանի 3-րդ ներկայացուցիչն էլ՝ Մախաչկալայի «Անժին» հանդես կգա 1/8 եզրափակիչում: Գուս Հիդինգի սաները մրցակցի հարկի տակ ոչ-ոքի (1-1) խաղացին «Հաննովերի» հետ եւ ի հաշիվ առաջին խաղում սեփական հարկի տակ տոնած հաղթանակի (3-1), կշարունակեն պայքարը: Ընդ որում «Անժին» հաշիվը հավասարեցրեց ավելացված ժամանակի 8-րդ րոպեին:

Ի տարբերություն ռուսական թիմերի, ուկրաինական բոլոր 3 ակումբներն էլ դուրս մնացին հետագա պայքարից: Կիեւի «Դինամոն» մրցակցի հարկի տակ 0-1 հաշվով զիջեց ֆրանսիական «Բորդոյին»: Առաջին խաղում գրանցվել էր ոչ-ոքի՝ 1-1: Խարկովի «Մետալիստը», որ առաջին խաղում հյուրընկալվելիս գոլազուրկ ոչ-ոքի էր խաղացել անգլիական «Նյուքասլի» հետ, պատասխան հանդիպումում զիջեց 0-1 հաշվով: «Դնեպրն» էլ «Բազելի» հետ սեփական հարկի տակ կայացած խաղն ավարտեց ոչ-ոքի (1-1): Առաջին խաղում «Բազելը» հաղթել էր 2-0 հաշվով:

1/16 եզրափակիչի մյուս հանդիպումներում գրանցվեցին հետեւյալ արդյունքները (փակագծում առաջին խաղի հաշիվն է). «Ֆեներբահչե»-ԲԱՏԷ՝ 1-0 (0-0), «Չելսի»-«Սպարտա»՝ 1-1 (1-0), «Բենֆիկա»-«Բայեր»՝ 2-1 (1-0), «Վիկտորիա»-«Նապոլի»՝ 2-0 (3-0), «Ստյաուա»-«Այաքս»՝ 2-0 (0-2), 4-2՝ 11 մ, «Օլիմպիակոս»-«Լեւանտե»՝ 0-1 (0-3), «Լիոն»-«Տոտենհեմ»՝ 1-1 (1-2), ՉՖՌ-«Ինտեր»՝ 0-3 (0-2), «Լացիո»-«Բորուսիա» (Մ.)՝ 2-0 (3-3), «Գենկ»-«Շտուտգարտ»՝ 0-2 (1-1):

Եվրոպայի լիգայի 1/8 եզրափակիչում կմրցեն հետեւյալ զույգերը:

**«Անժի»-«Նյուքասլ»**
**«Բազել»-«Զենիթ»**
**«Լեւանտե»-«Ռուբին»**
**«Ստյաուա»-«Չելսի»**
**«Տոտենհեմ»-«Ինտեր»**
**«Բենֆիկա»-«Բորդո»**
**«Շտուտգարտ»-«Լացիո»**
**«Վիկտորիա»-«Ֆեներբահչե»**

## ՖՈՒՏԲՈԼ

# «Ալաշկերտը» հաղթեց ամերիկյան թիմին

**Ֆուտբոլի Հայաստանի առաջին խմբում հանդես եկող «Ալաշկերտն» Անթալիայում ստուգողական հերթական խաղում 2-0 հաշվով հաղթեց ամերիկյան «Վիլմինգտոն Համերհեդսին», որը մասնակցում է ԱՄՆ-ի ֆուտբոլի 2-րդ խմբի առաջնությանը: Գոլերի հեղինակներ են դարձել Հովհաննես Մնացականյանն ու Միհրան Մանասյանը:**

**Ստուգողական վերջին հանդիպումն «Ալաշկերտը» կանցկացնի փետրվարի 24-ին ռումինական «Սագեատա Նավոդարի» թիմի հետ, իսկ հաջորդ օրը կվերադառնա Երեւան, որտեղ կնախապատրաստվի «Գանձասարի» հետ կայանալիք ՀՀ գավաթի քառորդ եզրափակիչ խաղին:**

# Հաղթական հաշիվը պահպանել չհաջողվեց

**Կիպրոսում «Միկան» ստուգողական 3-րդ խաղն անցկացրեց Ռուսաստանի 1-ին խումբը ներկայացնող Նալչիկի «Սպարտակի» հետ: Գրանցվեց ոչ-ոքի՝ 1-1: «Միկան» հաշիվը բացեց 70-րդ րոպեին, երբ տուգանայինի խաղարկումից հետո Գեւորգ Պողոսյանը գլխի հարվածով գրավեց դարպասը: Սակայն հաղթական հաշիվն ընդամենը 6 րոպե պահպանվեց: Իգոր Կորոնովը խոցեց Արմեն Խաչատրյանի պաշտպանած դարպասը:**

**Փետրվարի 24-ին «Միկան» Կիպրոսում վերջին խաղը կանցկացնի՝ մրցելով Վորոնեժի «Ֆակելի» հետ:**

# Անհաջողությունները շարունակվում են

**Նախապատրաստական շրջանում անհաջող է հանդես գալիս Կապանի «Գանձասարը», որը Թուրքիայում հերթական պարտությունը կրեց: Սեւադա Արզումանյանի սաները 1-2 հաշվով զիջեցին Ղազախստանի առաջնության արծաթե մրցանակակիր «Իրտիշին»:**

# Գոլառատ հանդիպում

**Դիլիջանի «Իմպուլսը» Կիպրոսում հերթական ստուգողական խաղում ուժերը չափեց Լեհաստանի 2-րդ խմբի առաջնությունում հանդես եկող «Դրուտեքս Բիտովիայի» հետ: Գոլառատ հանդիպումը 3-2 հաշվով շահեց լեհական ակումբը:**

**«Իմպուլսից» գոլերի հեղինակներ դարձան 11 մ հարվածը իստակ իրացրած Նորայր Գյոզալյանն ու Մաքսիմ Պուզանովը: Հավաքի ընթացքում իր վերջին հանդիպումն «Իմպուլսը» կանցկացնի Օրենբուրգի «Գազովիկի» հետ:**

# Հայ շախմատիստները առաջատարների խմբում են

**Հայաստանցի շախմատիստներ Սարգիս Մանուկյանն ու Արմինե Բաբայանը հաջող են մեկնարկել Իրանի Մաշհադ քաղաքում անցկացվող շախմատի մրցաշարում: 4 տուրից հետո նրանք վաստակած 3,5 միավորով առաջատարների շարքում են:**

**Հայաստանցի շախմատիստներն առայժմ հանդիպել են միայն իրանցիների հետ: Արմինեն հաղթել է Մահդի Մաշոմին, Պոուրա Դարինիին եւ Ամեր Ամինիին ու ոչ-ոքի է խաղացել Սոզանկարի հետ:**

**Սարգիսը մրցաշարը սկսեց Հոսեյն Ամինիի եւ Մահդի Ֆալահի նկատմամբ տոնած հաղթանակներով, ապա ոչ-ոքի խաղաց Գարսի Ֆորուշի հետ: 4-րդ տուրում նա պարտության մատնեց Կասրա Գոդարզին:**

**4 միավորով աղյուսակը գլխավորում են իրանցի 6 շախմատիստներ եւ վրացի միջազգային վարպետ Շոթա Ազալաձեն:**

# Նալբանդյանը դուրս մնաց պայքարից

**Դավիթ Նալբանդյանին չհաջողվեց հաղթահարել Բուենոս Այրեսի թենիսի մրցաշարի 2-րդ փուլը: Իսպանացի Դավիթ Ֆեռերը հաղթեց 3 խաղափուլում (2-6, 6-4, 6-0): Քառորդ եզրափակիչում Ֆեռերը կմրցի իտալացի Ֆաբիո Ֆոնինիի հետ, որը պայքարից դուրս էր մղել արգենտինացի Մարկո Տրունգելիտիին (7-5, 6-2):**

# Համեստ արդյունքներ

**Ռումինիայի Բրաշով քաղաքում ընթացող Եվրոպայի ձմեռային օլիմպիական պատանեկան 11-րդ խաղերում Հայաստանը ներկայացրած 3 մարզիկներն էլ շատ համեստ արդյունքներ ցույց տվեցին:**

**Ազատ ոճի դահուկավազքում Արայիկ Գրիգորյանը 83 մասնակիցների մեջ գրավեց 57-րդ տեղը: Սլավիկ Սիմոնյանը 73-րդն էր: Արագավազքում նշված դահուկորդները 87 մասնակիցների մեջ զբաղեցրին համապատասխանաբար 75-րդ եւ 84-րդ տեղերը:**

**Աղջիկների հսկա ոլորավայրէջքում Եվա Պապոյանը մրցուղին հաղթահարած 67 պատվիրակների մեջ վերջինն էր:**

# Շահավետ առաջարկ Շեւչենկոյին



**Ինդոնեզական «Միտրու Կուկար» ակումբի ղեկավարությունը հետաքրքրական առաջարկ է արել Եվրո-2012-ից հետո ֆուտբոլային կարիերան ավարտած Անդրեյ Շեւչենկոյին: Ակումբը պատրաստ է 36-ամյա ֆուտբոլիստին թիմի կազմում անցկացնելիք 5 հանդիպումներից յուրաքանչյուրի համար վճարել մոտ 1 մլրդ ռուպի (100 հազար դոլար):**

**Ըստ թիմի գլխավոր մարզիչ Ռոնի Ֆաուզանի, Շեւչենկոն համաձայն է տեղափոխվել Ինդոնեզիա, սակայն առայժմ հայտնի չէ, թե գործարքը երբ տեղի կունենա:**

**Շեւչենկոն օրերս այցելել էր Ինդոնեզիա եւ «Միլանի» լեգենդների թիմի կազմում մասնակցել էր ինդոնեզական լիգայի հավաքականի հետ հանդիպմանը՝ դառնալով գոլի հեղինակ: Այդ խաղում 4-2 հաշվով հաղթել էին «Միլանի» վետերանները:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

# ՄՐՑՈՒՅԹԻ ՀՐԱՎԵՐ

## Հայաստանի Հանրապետություն
## Երեւանի Մետրոպոլիտենի Վերականգնման Ծրագիր -Փուլ II

### ՄՐՑՈՒՅԹԻ ՀՐԱՎԵՐ
### ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՓԱԹԵԹ 8
### ՄԵՏՐՈՅԻ 81-717 ՏԻՊԻ 7 ՎԱԳՈՆՆԵՐԻ ԿԱՊԻՏԱԼ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ ԵՎ ՄՈԴԵՌՆԻԶԱՑԻԱ

Սույն Մրցույթի հրավերը հաջորդում է սույն ծրագրի Ընդհանուր Գնումների Ծանուցմանը, որը հրապարակվել է ՎԶԵԲ-ի «Գնումների Հնարավորություններ» կայքէջում՝ 2013թ.-ի հունվարի 25-ին:

«Կարեն Դեմիրճյանի անվան Երեւանի Մետրոպոլիտեն» ՓԲԸ (հետայսու՝ Գնորդ) նախատեսում է օգտագործել Վերակառուցման եւ Զարգացման Եվրոպական Բանկի (հետայսու՝ ՎԶԵԲ կամ Բանկ) միջոցների մի մասը, Եվրոպական Ներդրումային Բանկի (հետայսու՝ ԵՆԲ) վարկը եւ ԵՄ Հարեւանության Ներդրումային Գործիքից (հետայսու՝ ՀՆԳ) ստացված Դրամաշնորհը «Մետրոյի 81-717 տիպի 7 վագոնների կապիտալ վերանորոգման եւ մոդեռնիզացիայի» ծախսերը հոգալու համար, որը Երեւանի Մետրոպոլիտենի վերականգնման ծրագրի երկրորդ փուլի մաս է կազմում (Ծրագիր, Փուլ II): Ծրագրի Փուլ II-ը նպատակաուղղված է մետրոյի թունելներ ներթափանցող ջրի խնդրի եւ ներդրումներ պահանջող այլ բաղադրիչների խնդիրների լուծմանը:

Գործատուն այժմ հրավիրում է ընտրվելու իրավունք ունեցող Կապալառուներին ներկայացնել կնքված հայտեր՝ վարկային միջոցների մի մասից ֆինանսավորվող հետեւյալ պայմանագրի/երի կնքման համար.

**Մետրոյի 81-717 տիպի 7 վագոնների նախագծում, արտադրություն, կապիտալ վերանորոգում, մոդեռնիզացիա, փորձարկում, մատակարարում եւ հարակից ծառայությունների տրամադրում**

Նախատեսվում է, որ Կապալառուն կտեղափոխի Գործատուի առկա 7 մետրոյի վագոնները իր աշխատանքային արտադրամասեր՝ վերականգնման նպատակով: Կապալառուից կպահանջվի (ոչ լրիվ ցուցակ).

◆ Մետրոյի վագոնի թափքի ճակատային մասի կապիտալ վերանորոգում եւ մոդեռնիզացիա (վագոնի ճակատային մաս)

◆ Մեքենավարի խցիկի կապիտալ վերանորոգում եւ մոդեռնիզացիա

◆ Ուղեւորային սրահի կապիտալ վերանորոգում եւ մոդեռնիզացիա

◆ Ուղեւորային սրահի սահովի դռների մեխանիզմի կապիտալ վերանորոգում եւ մոդեռնիզացիա

◆ Լույսերի, հայելիների եւ երթուղու ցուցասախտակի կապիտալ վերանորոգում եւ մոդեռնիզացիա

◆ Այլ սարքերի եւ սարքավորումների տեղադրում

◆ Մետրոյի վագոնների թափքի ինտերիերի եւ էքստերիերի նոր ներկվածքի ապահովում

Պայմանագրի ավարտի համար նախատեսվող ժամանակահատվածը՝ Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 10 ամիս:

Բանկի վարկային միջոցներից ֆինանսավորվող մրցույթները բաց են բոլոր երկրների ընկերությունների համար:

Պայմանագրի շնորհման որակավորում անցնելու համար մրցույթի մասնակիցները պետք է համապատասխանեն հետեւյալ նվազագույն չափանիշներին.

(i) այն դեպքում, երբ մրցույթի մասնակիցը ըստ Պայմանագրի առաջարկում է Ապրանքների մատակարարում, որոնք իր կողմից չեն թողարկվում կամ ինչ-որ կերպ չեն արտադրվում, այդ մասնակիցը պետք է պատշաճ կերպով լիազորված լինի Ապրանքների թողարկողի կամ արտադրողի կողմից՝ Գործատուի երկրում այդ Ապրանքների մատակարարման համար: Մրցույթի մասնակիցը պետք է ներկայացնի Արտադրողի Լիազորության Ձեւ (Հավել I.v)՝ Ապրանքների եւ բոլոր հիմնական գնվելիք բաղադրիչների համար:

(ii) Պետք է ներկայացվեն աուդիտային հաշվեկշռի թերթիկները նախորդ երեք (3) տարիների համար կամ, իսկ եթե այն չի պահանջվում մրցույթի մասնակցի երկրի օրենսդրությամբ՝ Գործատուի համար ընդունելի ցանկացած այլ ֆինանսական հաշվետվություններ, որոնք կցուցադրեն մրցույթի մասնակիցների ֆինանսական վիճակի կայունությունը՝ արտացոլելով նրա երկարաժամկետ եկամտաբերությունը: Գործատուն անհրաժեշտության դեպքում հարցումներ կկատարի մրցույթի մասնակցի բանկիրներից:

(iii) Որպես առաջատար Կապալառու՝ միջին տարեկան շրջանառությունը (որը որոշվում է ավարտված կամ ընթացիկ պայմանագրերից՝ քաղվածքների հիման վրա) նախորդ երեք (3) տարիների ընթացքում պետք է լինի ոչ պակաս քան 2.5 միլիոն (երկու միլիոն հինգ հարյուր հազար) եվրոյին համարժեք

(iv) Մրցույթի մասնակիցը պետք է ապացուցի, որ իրեն հասու են լիկվիդային միջոցներ, գրավով չծանրաբեռնված անշարժ գույք, վարկային գծեր եւ այլ ֆինանսական միջոցներ, որոնք բավարար են ապահովելու պայմանագրի իրականացման համար ֆինանսական միջոցների շարժը՝ հաշվարկված առաջարկվող լոտի արժեքի 80%-ին համարժեք Եվրոյով գումարից ոչ պակաս՝ հաշվի առնելով մրցույթի մասնակցի պարտավորությունները այլ պայմանագրերի նկատմամբ:

(v) Որպես Գլխավոր Կապալառու, Կապալառու կամ Ենթակապալառու նախորդ հինգ (5) տարիների ընթացքում առնվազն երեք (3) պայմանագրերի հաջող իրականացման փորձ, որոնցից յուրաքանչյուրը առաջարկվող լոտի արժեքի առնվազն ութսուն (80) տոկոսի արժողությամբ, որոնք հաջողությամբ ավարտին են հասցվել եւ էապես համապատասխանել են պայմանագրի պահանջներին եւ որոնք համեմատելի են առաջարկվող պայմանագրի հետ: Մրցույթի մասնակիցը պետք է տրամադրի գնորդների անունները, հասցեները, պայմանագրային տվյալները եւ արժեքները:

(vi) Մրցույթի մասնակիցը պետք է ներկայացնի ընկերության Որակի Ապահովման/Որակի Վերահսկման հավաստագրերով հաստատված որակավորումների նկարագրությունը (օրինակ՝ վերջին ISO 9001 կամ խոշոր արտադրական սարքերի արտադրողների հավաստագրերի տարածաշրջանային համարժեքները, որոնք պետք է ուժի մեջ լինեն առնվազն մատակարարման ժամանակաշրջանում):

(vii) Մրցույթի մասնակիցը պետք է տրամադրի հավաստի տեղեկատվություն ցանկացած ընթացիկ կամ անցած դատական, կամ արբիտրաժային գործընթացների արդյունքների վերաբերյալ՝ իր ավարտված կամ ընթացիկ պայմանագրերի հետ կապված նախորդ երեք (3) տարիների համար: Մրցույթի մասնակցի կամ համատեղ ձեռնարկության որեւէ գործընկերոջ կողմից անցյալում պայմանագրերի ոչ բավարար իրականացման կամ նրա դեմ վճիռների շարունակական պատմությունը կարող է հանգեցնել մրցույթի մասնակցի հայտի մերժմանը:

(viii) Մրցույթի մասնակիցը պետք է ապացուցի, որ ի վիճակի է իրականացնել Օբյեկտների վերանորոգումը եւ տեխսպասարկումը Հայաստանում Թերությունների համար Պատասխանատվության Ժամանակաշրջանում, ի վիճակի է իրականացնել ծախսանյութերի եւ պահեստամասերի արագ մատակարարում Շինհրապարակ, եւ որ ի վիճակի է ապահովել Օբյեկտների վերանորոգման եւ տեխնիկական սպասարկման հնարավորությունը Հայաստանում Թերությունների համար Պատասխանատվության Ժամանակաշրջանից հետո նույնպես: Մրցույթի մասնակիցը պետք է ցույց տա, թե ինչպես են այս պարտավորությունները իրականացվելու պայմանագրի շնորհման դեպքում:

Եթե հայտը ներկայացված է գործընկերության հիմքով գործող կամ այլ ոչ կորպորատիվ ձեռնարկությունների ասոցիացիայի կողմից, որոնք իրենց գործունեությունը իրականացնում են համատեղ ձեռնարկության (այսուհետեւ համատեղ ձեռնարկություն կամ կոնսորցիումներ) համաձայնագրի հիման վրա, ապա այսպիսի համատեղ ձեռնարկությունը կամ կոնսորցիումը պետք է բավարարի հետեւյալ որակավորման պահանջներին.

(a) Ձեռնարկության կամ կոնսորցիումի առաջատար անդամ ընկերությունը («ձեռնարկության կամ կոնսորցիումի պատասխանատու ընկերությունը») պետք է ունենա առնվազն երկու (2) պայմանագրերի իրականացման հիմնական կապալառուի փորձ, ըստ վերը սահմանված (v) որակավորման չափանիշի:

(b) Առաջատար անդամ ընկերությունը պետք է բավարարի վերը սահմանված որակավորման (iii) եւ (iv) չափանիշների վաթսուն (60) տոկոսից ոչ պակասը;

(c) Առաջատար անդամ ընկերությունը պետք է բավարարի վերոնշյալ (vi) որակավորման չափանիշը:

(d) Ձեռնարկության կամ կոնսորցիումի անդամ ընկերություններից առնվազն մեկը պետք է ունենա առնվազն մեկ (1) պայմանագրի իրականացման հիմնական կապալառուի, կապալառուի կամ ենթակապալառուի փորձ, որն առնչվի վերը սահմանված (v) որակավորման չափանիշին:

(e) Ձեռնարկության կամ կոնսորցիումի յուրաքանչյուր անդամ ընկերություն պետք է բավարարի վերը սահմանված (ii) եւ (vii) որակավորման չափանիշները, ավելին, յուրաքանչյուր անդամ ընկերություն պետք է բավարարի վերը սահմանված (iii) եւ (iv) որակավորման չափանիշների ոչ պակաս քան քսան (20) տոկոսը:

(f) Ձեռնարկությունը կամ կոնսորցիումը համատեղ կերպ պետք է բավարարեն (ii) (iii) (iv) (v) եւ (viii) որակավորման չափանիշները, ինչի նպատակով յուրաքանչյուր անդամ ընկերության համապատասխան թվերը գումարվելու են՝ ձեռնարկության կամ կոնսորցիումի ընդհանուր կարողության մասին պատկերացում ստանալու համար:

Մրցութային փաստաթղթերը կարելի է ձեռք բերել ստորեւ նշված հասցեում տեղակայված գրասենյակից՝ վճարելով 200 (երկու հարյուր) Եվրո կամ դրան համարժեք ՀՀ Դրամ, կամ այլ ազատ փոխարկելի արժույթով գումար, որը ենթակա չէ վերադարձման: Տարադրամի փոխանակման փոխարժեքը պետք է համապատասխանի Հայաստանի Հանրապետության Կենտրոնական Բանկի կողմից սահմանված վճարման օրվա տարադրամի փոխարժեքին:

Վճարումը կատարվում է բանկային փոխանցման միջոցով, իսկ մրցութային փաստաթղթերը տրամադրվում են Մրցույթի մասնակցի կողմից համապատասխան բանկային հաշիվներին գումարի փոխանցման ստացականը ներկայացնելուց կամ Գնորդի բանկի կողմից գումարի ստացման փաստը հաստատելուց հետո: Կանխիկ վճարումները արգելվում են:

| | |
|---|---|
| Թղթակից բանկի անվանում, Երկիր | Deutsche Bank AG, Ֆրանկֆուրտ, Գերմանիա SWIFT DEUTDEFF |
| Շահառուի Բանկ, Երկիր | UNIBANK, Հայաստան SWIFT UNIJ AM 22 Հաշիվ 9477282 |
| Շահառուի Հաշիվ, Եվրո | Հաշիվ No: 24104004285502 Անվանում. «Կարեն Դեմիրճյանի անվան Երեւանի Մետրոպոլիտեն» |
| Վճարման նպատակը | Մրցութային փաստաթղթերի ստացման համար վճար |
| Շահառու Բանկ, ՀՀ դրամ | UNIBANK, Հայաստան |
| Շահառուի Հաշիվ, ՀՀ դրամ | Հաշիվ No: 24104004285500 Անվանում. «Կարեն Դեմիրճյանի անվան Երեւանի Մետրոպոլիտեն» |

Չվերադարձվող գումարի վճարման պատշաճ հաստատումը ստանալուց հետո փաստաթղթերը արագորեն կուղարկվեն սուրհանդակային փոստով, սակայն ուղարկողը պատասխանատվություն չի կրում դրանց կորստի կամ ուշացմամբ առաքման համար: Պահանջի դեպքում փաստաթղթերը կարող են նաեւ ուղարկվել էլեկտրոնային տարբերակով՝ ապագա մրցույթի մասնակցի կողմից չվերադարձվող գումարի վճարման մասին համապատասխան հաստատումը ներկայացնելուց հետո: Տպագիր եւ էլեկտրոնային տարբերակների միջեւ անհամապատասխանությունների դեպքում տպագիր տարբերակը գերակայում է:

Այցելությունները Գործատուի դեպո տեղի կունենան 2013թ. մարտի 14-ին (հինգշաբթի) եւ մարտի 15-ին (ուրբաթ) օրերը: Մրցույթի մասնակիցներից ակնկալվում է բոլոր զննումների եւ չափումների իրականացումը տեղում՝ տվյալ այցելության ընթացքում, ինչը նրանց պետք է բավարարի այն առումով, որ բոլոր անհրաժեշտ քանակները ներառվեն մրցութային գների մեջ: Քանակների վերաչափումներ հետագայում չեն թույլատրվելու: Ակնկալվում է, որ Մրցույթի մասնակիցները պետք է լիարժեք պատկերացում ստանան Գործատուի առկա մետրոյի շարժակազմի ֆիզիկական վիճակի, տիպի եւ տարիքի մասին: Ուստի շինհրապարակ այցելությունը համարվում է պարտադիր: Մուտքի/ելքի վիզաները կարող են գնվել օդանավակայանում: Նրանք, ովքեր ցանկանում են ժամանել, անելու են դա իրենց սեփական միջոցներով:

Բոլոր մրցութային հայտերը պետք է ուղեկցվեն 50,000 (հիսուն հազար) Եվրո կամ դրան համարժեք այլ ազատ փոխարկելի տարադրամով «Կարեն Դեմիրճյանի անվան Երեւանի Մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի անունով տրված Բանկային երաշխիքով, ինչպես դա սահմանված է Հավել I. Iv.-ում:

Մրցութային հայտերը պետք է առաքվեն ստորեւ նշված հասցեով ոչ ուշ քան հինգշաբթի՝ 2013թ-ի ապրիլի 25 -ին ժ. 15:00 (Երեւանի ժամանակով): Մրցութային հայտերը կբացվեն հինգշաբթի՝ 2013թ-ի ապրիլի 25-ին, ժ. 16:00 (Երեւանի ժամանակով) այն մասնակիցների ներկայությամբ, ովքեր կցանկանան ներկա գտնվել հայտերի բացմանը:

Մրցութային փաստաթղթեր ձեռք բերած մրցույթի հնարավոր մասնակիցների գրանցամատյանը կարող է տրամադրվել ստորեւ նշված հասցեում:

Մրցույթի պոտենցիալ մասնակիցները կարող են լրացուցիչ տեղեկատվություն ստանալ, ուսումնասիրել եւ ձեռք բերել մրցութային փաստաթղթերը հետեւյալ գրասենյակում.

**«Կարեն Դեմիրճյանի անվան Երեւանի Մետրոպոլիտեն» ՓԲԸ**
**Ծրագրի Իրականացման Խումբ (ԾԻԽ)**
**Բաղրամյան պ. 78**
**Երեւան 0033**
**Հայաստանի Հանրապետություն**

**Կոնտակտային անձ՝ պրն. Գարիկ Մանուկյան**
**Հեռ/ֆաքս. +374 10 27 30 81**
**Էլ. Փոստ. metro374@gmail.com**

w w w . a z g . a m

ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ
Մասնագիտություն, որն անհրաժեշտ է ամենուր
ՑԱՆԿԱՆՈ՞ՒՄ ԵՔ ԴԱՌՆԱԼ ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ՀԱՇՎԱՊԱՀ, ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՓՈՐՁ:
«ԷԿՈՆՈՄԻԿԱ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ» ԿԵՆՏՐՈՆ
եթե ուզում եք լինել պրոֆեսիոնալ
Բաղրամյան 24դ,
հեռ. 54-24-81, 54-74-81




ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 22.2.2013, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: